



Հայ Գրողների Կապի Ընկերության № 2

ՀԱՅԿԱՊԵՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆ

ԳՐԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՆԵՐ

ԹՐԺԱՎԱՅ

Ժամանակակից Գրողներ

ԳՐԱԿԱՆՈՍՈՒԹՅԱՆ

ԶԵՊԵԼ ԵՍԵՅԵՆՆԻ

ԳՐԱԿԱՆ

ԹՐԺԱՎԱՅ

Պատրոն Ն. Ազմունցի, Գոյից. 7

1916


Հայ Գրողների Կովի. Ընկերութիւն № 2

ՍՏՏԻՊԵՆՏԻ Ե 1881 Յ.

ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՆԵՐ


ԹՐԲԱՀԱՅ

Ճամանակակից Գրողներ



ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԶԸՊԵԼ ԵՍՇՅԵԱՆԻ



Թ Ի Յ Լ Ի Ս

Տպարան Ն. Աղանեանցի, Պոլից. 7

1916



891-99-092

6-58

A $\frac{\pi}{31002}$

30412

Handwritten notes in red and black ink at the top of the page.

ԹՐԲԱՂԱՅ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՐՈՂՆԵՐԸ

Սիրելի ազգակիցներ.

Տարիներէ ի վեր բաղձանքս եղած է այցելութեան զայ մեր Կովկասի եզրայրներուն: Բազզը այնպէս վճռած է եղեր, որ այդ այցելութիւնը կատարեմ զժբազզ զէպքերու հետեանքով, սգաւոր սրտով և ախուր տրամադրութիւններով:

Սոսկալի փոթորիկը անցաւ մեր ազգային կեանքին վրայէն ու այնքան հաստատուն կաղնիները, որքան նորածիլ բարունակները արմատախիլ եղան անխնայ կերպով: Այլ սակայն ամենքս ալ համոզուած ենք որ թշնամին անկարող պիտի դառնայ մեր անսպառ կենսունակութեան հանդէպ և մայրենի երկիրը քիչ ատենէն կը ծաղկի նոր ծաղիկներով և իբր անմահ Ֆէնիքս կը վերածնի իր մոխիրներուն մէջէն:

Իրեւէր որ սոսկալի ուրականք զխաւորապէս հարւածեց մեր մտաւորականները: Եւ անոնք, որոնց անունները մեր թրքահայոց փառքը ու պարծանքը կը կազմէին, անոնք մեծ մասով կամ նահատակուեցան և կամ մինչև այժմ կը գտնուին զմնդակ արսորափայրերու կամ գարշելի զնդաններու մէջ:

Ու այս կորուստը անդարմանելին է. կանցնի ժամանակը, կը փոխուին զէպքերը. կը լեցուին պակասը թիւերուն և պարապը քաղաքներուն, բայց Զարգարեանի մը, Զօհրապի մը սեզը պարապ կը մնան:

Յարգանք իրենց սիրելի յիշատակին:

Մասնաւորելով իմ խօսքս թրքահայ ժամանակակից գրողներու վրայ, որոնք զրեթէ առանց բացառութեան զօհնացին թշնամիին ատելութեան, կըցանկայի յիշատակել և ձեզ խօսել ըզորի մասին, բայց կը խնդրեմ որ ներ-

դամիտ ըլլաք, եթէ ժամանակի սղութեան պատճառաւ ինձի անկարելի դառնայ արտասանել ամեն մէկ թրքահայ զբրայէտի անունը: Ատիկա ոչ արդիւնքը պիտի ըլլայ մոռացութեան և ոչ ալ կողմնակալ ոգիի: Ամեն մէկը իր առաւել կամ նուազ տաղանդով իր յարգելի տեղը ունեցած է թրքահայ ընդհանուր գրականութեան մէջ և ամեն մէկուն ջանքը ու աշխատանքը թանկադին է մեզի համար, բայց ես այս իրիկուն ստիպուած եմ նշանակել ամենէն ցայտուն դէմքերը միայն, որոնք գրական արուեստը հանգրուանի մը հասցուցած են և կամ գրական յեղաշրջութեան մէջ նոր հորիզոններ բացած են իրենց արուեստով և տաղանդով:

Գրական արուեստը զեղարուեստի ճիւղերուն մէջ ըլլալով ամենէն ամբողջականը և յստակը, գերագոյն արտայայտութիւնն է ժողովրդի մը հոգիին: Ազգային հանճար գրականութեան միջոցաւ կարտայայտէ իր բարձրագոյն կարելիութիւնները: Գրականութիւնը ներկայացնելով հանդերձ ազգի մը համադրական արժէքը, արուեստի աստուածային յատկութիւններով ներկայէն կը սլանայ երբեմն դէպ ի առաջ ու մարգարէական և տեսանոց, մեզ նախաճաշակը կընծայէ դալիք օրերու պայծառութեան ու փառքերու: Ձեզ խօսելով թրքահայ գրականութեան և անոր ձգտումներուն և իտէայններուն մասին, ձեզ ներկայացուցած կըլլամ, ուրեմն, թրքահայ ժողովուրդին հոգին, իր տառապանքներով և յոյսերով, իր սոսկալի օրերու նախազգացումներով, բայց նաև ու մանաւանդ իր վերջնական յաղթանակի հաստատ հաւատքով:

Բացատրելու համար ժամանակակից թրքահայ գրականութեան յատկանիշները, անհրաժեշտ է արագ ակնարկ մը նետել այն ազգեցութեանց վրայ, որոնց զօրութեամբ ոչ միայն գրական այդ գեղեցիկ վերածնունդը յառաջ եկած է, այլ նաև կաղմուած է գրական լեզուն, այնքան հարուստ և ճկուն աշխարհիկ հայերէնը, որուն հնչական ներդաշնակութիւնը, ճոխ բառամթերքը և քերականական յստակ և վայելուչ կազմը զայն ընդունակ կը դարձնեն արտայայտելու զգացումներու և զգայնութեանց գերանուրբ երանդները և միանգամայն ամենաբարդ մտածումի և դա-

տողութեանց յստակ և իմանալի դասաւորումը :

Ժժ դարու սկզբին Վենետիկ եղած է այն հրեկայա-
կան փարոսը, որ իր լուսարձակումներով սկսած է փարա-
տել քառսը որ կը տիրէր թրքահայոց և մասնաւորապէս
Պօլսոյ պատուելիական մտաւորականութեան մէջ: Մէկ
կողմէ ազճատ ու աղաւաղեալ զբարատ մը և միւս կողմա-
նէ ժողովրդական լեզուն թրքական ոճով և խճողուած
թրքական բառերով, և ասութիւններով, ոչ մէկ հնարա-
ւորութիւն կընծայէին, որ բուն հայերէնը վերագարթէր
իր վաղնջական բունէն: Այդ ժամանակի գրական և գա-
ւառական բարբառն է, որ տեղի տուած է այն կարծիքին թէ
թրքահայ գրական լեզուն ազգուած է թրքերէնէ: Հոս ոչ
իմ դերս է և ոչ ալ ժամանակ կայ պատասխանելու այն
կարգ մը նախապաշարեալ և թիւր կարծիքներուն,
որ մինչև այժմ կը տիրեն թուրքահայ արդի բարբառին
նկատմամբ. միայն արագօրէն մատնանշելով այն ճշմարիտ
ազգեցութիւնները, որոնց ներքև դարբնուած է մեր նոր
լեզուն, կը կարծեմ թէ բաւականին լուսարանած կըլլամ
այդ հարցը:

Վենետիկ շատոնց ի վեր գոյութիւն ունէր և միաբա-
նութիւնը իր հսկայական գործը կը կառուցանէր մեղուա-
ջան և հանդարտ աշխատութիւնով: Մէկ կողմէն կը վերա-
հաստատէր նախնեաց ոսկեղենիկ բարբառը իր բոլոր
չքեղութեան, պայծառութեան և փառքին մէջ և միւս կող-
մանէ գասական և հին հեղինակներու թարգմանութեամբ
մեր ազգին մէջ կը մացնէր տիեզերական մեծ հանճարնե-
րու ճաշակը: Բուն հայերէնը, գրաբար լեզուն պիտի դառ-
նար այլ ևս այն մաքուր աղբիւրը, որ պիտի գտէր և իրօտար
կեղտերէն ազատէր Պօլսոյ գրական բարբառը: Անիկա պի-
տի ըլլար գանձարանը իսկական հայ բառերու և ասու-
թիւններու, որոնք հետզհետէ պիտի գրաւէին օտարամուտ
և խորթ բառերու տեղերը:

Միւս կողմանէ Ֆրանսական մեծ յեղափոխութիւնը իր
ազգեցութիւնը գործած էր այն մէկ քանի մտաւորական
անձնաւորութեանց վրայ, որոնք իրենց դիրքին և անձնա-
լան յատկութիւններուն շնորհիւ ընդունակ դարձած էին

կրելու այդ մեծ և աշխարհաստան զէպրեբու անդեցու-
թիւնը։ Նոր աշխարհայեացքը արթնցուցած էր նաև մեր
ազգային ոգին. մենք մտած էինք այլ ևս մեր իսկական
ճանքուն մէջ, մենք գտած էինք ինքզինքնիս. ու զիկամա-
բութեամբ Օտեաններու, Տասեաններու և նման մեծ ան-
հատականութեանց ազգային բազկերակը սկսած էր դարնել
մեծ և երկարատև թմրութենէ մը ևսքը։ Այս ազգային
տրամադրութիւնները պիտի մղէին անշուշտ մտաւորական-
ները օգտուելու Վենետիկէն։ Միարժուութեան հրատարա-
կութիւնները սկսան ծաւալ գանել ժողովրդին որոշ մէկ
գասակարգին մէջ, ուրկէ անուղղակի կերպով պիտի ազ-
գուէին զպրոցները և հեռակարար մինչև ստորին խաւերը։

Աւրիշ վառարան մը ազգային կրթութեան երևան
կուգար Վարազի մէջ, որուն հանճարեղ ոգին էր Խրիմեան
Հայրիկ։ Հարեանցի նկատողի մը համար Վենետիկ և Վա-
րագ կրնան ներհակ ազգեցութիւններու կեդրոններ նկա-
տուիլ, բայց ըստ էութեան իրարմէ անկախօրէն Խրիմեան
Հայրիկ ու Ալիշան նոյն իտէալին կը դիմէին։ Խրիմեան
մեղ կը բանար դռները բնաշխարհի գանձերուն, իր գրա-
կան լեզուով և հայկական սճով նոր արիւն և աւիւն կը
մտցնէր թրքահայ վտիտ բարբառին մէջ, մեղ կը յայտնէր
ներշնչման նոր և բուն աղբիւրները և հայութեան ակնար-
կը կը դարձնէր բուն Հայաստանի վրայ և բուն հայ ժողովր-
դին վրայ, որ մինչև այն ժամանակ անտեսուած և նախա-
տուած էր իր սղորմելի և գեանաքարշ թշուառութեան
պատճառաւ։

Ու ահա յանկարծ խարիպին ցնցոտիները ապագայ
յոյսերու ողկեղօծ պատմուճանի կը փոխուէին. մայրաքա-
ղաքի հանգիստ, ազահով և նոյն իսկ փարթամ կեանքին
մէջ օտարացած այրերու և տիկիճներու գորովադին և յու-
զեալ ուշադրութիւնը կը դառնար հայրենի երկիրներու
տառապանքներուն և յոյսերուն վրայ։ Աստուածային կայծը
վառուած էր, անիկա պիտի վառէր, բորբոքուէր հեազհեաէ
մինչև որ դառնար այն անշիջելի հրդեհը, որուն զիմաց
դարաւոր թշնամին պարբերաբար և յաճորդաբար իր ան-
կարողութեան զայրոյթը պիտի յայտնէր, դաժան և ան-

գուժ խստութեամբ մը:

Երբմեան մեղ կը ծանօթացնէր ներկայ իրականութեան, մինչ Վինետիկ կը վերականգանացնէր սղինները մեր նախնեաց: Մէկ կողմէն հայկական դաւաններու տառապանքը և միւս կողմանէ ազգային պատմութիւնը, նախնեաց մատենապրութիւնը, հին փառքերը և հին ցաւերը հիմնաքարը կը կազմէին այդպիսով թըքահայ ժողովրդին, մինչ Քրանսական զրափան աղղեցութիւնը կը հաշտեցնէր հինը նորին հետ, կը ներդաշնակէր դանձազան աղղեցութիւնները և անոնց համադրական արժէքովը կը կազմէր արդիական աշխարհայեացքը հայ ազգին: Ահա թէ ի՞նչ ազդիւրներ, ի՞նչ ազդակներ և ի՞նչ դործօններ վերածնողները եղած են թիւրքահայ արդի գրականութեան և բարբառին:

Երկունքի երկարատեւ շրջանէ մը ետքը 90-ական թուականը մեր գրականութեան մէջ կը ներկայացնէ իրր գեղեցիկ և արդիւնաւոր հանգրուան մը: Զուգընթացաբար հայկական խնդիրը իր ոգևորութեան բարձրագոյն կէտերէն մէկուն մէջ կը գանուէր: Բարենորոգմանց հարցը կարծարձուէր և կարմիր Սուլթանը զիջումներու կը հարկադրէր: Այն ժամանակի «Հայրենիք» օրաթիերթը Գ. Շահնազարի խմբագրապետութեամբ զլիաւոր կեդրոնը կը դառնար հայ գրականութեան: Անիկա օրաթիերթ մը ըլլալէ աւելի գրական դպրոց մըն էր, որուն վարպետներն էին Արփիար Արփիարեան, Սիպիլ, Ատն Բաշալեան, Գրիգոր Զօհրապ. Շանթ նոյնպէս իր գրական փայլուն սկզբնաւորութիւնը ըրած է «Հայրենիքի» մէջ և նաև Արշակ Զօպանեան որ թէև տակաւին շատ երիտասարդ, բայց արդէն իսկ յայտնուած էր իր գեղեցիկ և ճկուն գրական ոճով ու գեղեցկագիտական հագուազիւտ բնագոյններով:

Գրեթէ ամենքն ալ բացի Արփիարեանէ, որ հարազատ հայկարան մըն էր, ուղղակի թէ անուղղակի կերպով կրած էին Քրանսական աղղեցութիւնը և իրենց արձակին մէջ կը մտցնէին մեծ և պայծառ լիզուին յտակութիւնը, նախադասութեանց ներդաշնակ դասաւորումը և մտածումներու արտայայտութեան ճկունութիւնը ու նրբութիւնը:

Միևնոյն ժամանակ հմուտ հայկաբաններ, լեզուն սովորած դասական գրաբարով, անոնք այնքան տէրն էին իրենց մայրենի լեզուին, որ Ֆրանսական գրականութեան ազդեցութիւնը կը մտնար մեր մէջ առանց հայերէն լեզուին և գրական ոգիին հիմունքը խախտելու:

Ֆրանսական լեզուն և գրականութիւնը այլ ևս բոլորովին մեր զրական դաստիարակիչներն էին: Մեծ և գեղեցիկ երկրին գրական յեղաշրջումը և պայքարները ընտանի էին մեզի: Մենք մեր Թէրզեաններով, Տիւսարներով, Պէշիկթաշլեաններով անցեր էինք արդէն ոսմանտիզմի և քնարերգութեան շրջանները և մեծ վարպետներ տուած էինք յանձին Դուրեանի և Պէշիկթաշլեանի, որոնց քնարերգական հանճարը իրենց պատուոյ տեղը կընային ունենալ տիեզերական գրականութեան մէջ: Այլ ևս իրապաշտ գրարոցի յազթանակի օրերն էին. Մօբասսան, Զօլա, Ֆլօպէո, նոր աստղերը Ֆրանսական գրականութեան, կը փայլէին պայծառութեամբ: Մեր ազգային գրականութիւնը պատուով կը հետևէր մեծ ազգերու գրական յեղաշրջման ու «Հայրենիք»-ի խումբը իրապաշտ դարոցի կնիքը կը դնէր մեր գրականութեան մէջ: Լեզուն այլ ևս թօթափելով հին և գրաբարախառն ձևերը, կը ստանար իր վերջնական գիծերը և աշխարհիկ հայ լեզուն իր բոլոր թարմութեամբ և շքեղութեամբ գեղեցիկ և ճկուն գործիք մը կը դառնար հայ գրագէտներու համար: Արփիարեան իր զուտ հայկական ոճերով և մտայնութեամբ հայ գրականութիւնը կը պահպանէր իր հարազատ եզրերուն մէջ, Բաշալեան իր ոճաբանի կուռ և սեղմ նախադասութիւններով անողոք կերպով կը պայքարէր փոխանցման շրջանի յատուկ տարտամ և ծանծաղ ձևերուն դէմ: Ոճի վարպետ Բաշալեան, իր կիրթ ու շափաւոր լեզուով և հասուն մտածողութեամբ կուտար այն գեղեցիկ վիպակները, որոնք միշտ զարդը պիտի կազմեն այդ թուականի ազգային գրականութեան: Տիգրան Կամսարական իր խզճամիտ վիպասանի և պատուախնդիր գրագէտի մտահոգութիւններով ոչ միայն մեր գրականութիւնը կօծտէր իր «Վարժապետի աղջիկը» արժէքաւոր վէպով, այլ նաև մեր մէջ կը մտցնէր արուեստին շերմե-

ուանդութեամբ և ակնածանօք մերձենալու թանկագին յատկութիւնը: Սիպիլ, մայրաքաղաքացի նրբերանդ բանաստեղծուհի, իր նիւթերուն և ներշնչումներուն փափկութիւնը կը հագեցնէր այնպիսի ճկուն և մետաքսաւէտ ոճով մը, որ հայերէն լեզուն կը դարձնէր ներդաշնակ մրմունջ մը, ընդունակ ժանկկային և անշօշափելի նրբութիւններու: Բայց իրապաշտ դպրոցը, որ այդ ժամանակի գրական ընդհանուր ոգին կարտայայտէր, իր ամենէն հզօր ներկայացուցիչը պիտի ունենար յանձին Գրիգոր Զօհրապի, որուն վրայ կանգ պիտի առնենք:

Զօհրապ ծնած է 1860-ին Կ. Պօլսոյ մէջ, իր իրաւագիտական ուսումը կատարելագործած է Բարիլլի մէջ, ուր նաև հետևած է երկրաչափական վարժարանին:

Յստակ կերպով ըմբռնելու համար Զօհրապի տաղանդը, անհրաժեշտ է միշտ աչքի առաջ ունենալ իր անձնաւորութիւնը, որովհետև գրականութիւնը ետքէն ստացուած արուեստ մը չէ իրեն համար և ոչ ալ ստպարէզ մը, այլ ինքնարուխ, յորդ և անխորդախ արտայայտութիւնը իր խառնուածքին: Ու այդ խառնուածքը հարուստ և զօրեղ է, տեսակ մը անդսպելի ուժ, որ կը գլէ կանցնի բոլոր պայմանադրական սահմանումները, բոլոր նախապաշարումները և ընկերութեան ընդունուած սովորութիւնները գրեթէ առանց պայթակղեցնելու: Իր ֆիզիքական երևոյթն ալ հաւատարմօրէն կարտայայտէր իր անհատականութիւնը. միջահասակ և ամուր կազմուածքով, խրոխտ կեցւածքով, իր անձին վրայ կը կրէր տեսակ մը արհամարհական անտարբերութիւն կեղծ մեծութիւններու ևխարդախ փառքերու հանդէպ. իր նայուածքը բանիմաց լրջութիւնով մը տողորուած էր, բայց յաճախ իր աչքերուն մէջ կը կայծկտար ներդաշնակ և լայն հեղնութիւնը, գրեթէ գորովագին հեղնութիւնը, որ ուժեղ և ինքնավստահ անհատականութեանց յատուկ է: Ծարտար և անպարտելի փաստաբան, անիկա գրեթէ երբէք չէ կորսնցուցած իրեն յանձնուած զատը: Իր պերճախօսութիւնը և հետորական արուեստի մէջ ունեցած տաղանդը բաւական պիտի ըլլային իր անունը յաւերժացնելու: Ամպիոնին վրայ, ուր յաճախ տեսանք զինքը Սո-

Ճաննան սահմանադրութեան հստակումէն ետքը, անմիջապէս կը տիրապետէր իր ունկընդիրներուն: Իր սեղմ տրամաբանութիւնը, իր մաքիբու շարքին գահավիժող և ներդաշնակ յաջորդութիւնը, իր զօրեղ խառնուածքէն բրդխող անակնկալ ժայթքումները կը զզրդէր հոգիները և բանին զօրութիւնը թափանցել կուտար անոնց մէջ: Անիկա դիտէր իր արուեստին բոլոր գաղտնիքները, օրոնց դիտութիւնը աւելի իր խորքերէն քաղած էր քան թէ ստացական կրթութիւնէ. անիկա թանկագին յատկութիւնը ունէր ստեղծելու այն իմացական մթնոլորտը, որուն մէջ հասարակութեան հոգեկան վիճակին նկատ հաղորդակցութեան կը մտնար և իր յուզումներովը, իր գայրոյթներովը, ինչպէս նաև իր խանդավառութիւններովը կը յաջողէր յուզել և ոգևորել զինքը մտիկ բնողները:

Զօհրապի գրականութիւնը նոյնպէս հարազատ արտայայտութիւնն էր իր խառնուածքին: «Անհետացող սերունդ մը» վէպին մէջ իր տաղանդը, իր բոլոր զեղեցիկ գիծերով կը յայտնուի բայց գեւ տնաս է ու այն մասնաւոր միամտութիւնը, որ կը արիւն հոն, թէև չի եղծանկր դրքին արժանիքները, բայց արդեւ կը լայ իր լրումին մէջ յայտնաբերելու այդ մեծ տաղանդը: Բայց այդ գիրքէն զրեթէ անմիջապէս ետքը վիպակներու շարքը, որոնք կերևային «Հայրենիք»-ի և մանաւանդ «Մասիս» շարաթաթերթին մէջ որ իր զեկավարութեան ներքև կը գտնուէր, այլ ևս անսայթաթ կերպով կը գծեն իր զեղեցիկ գրական գործունէութեան յեղաշրջումը:

Զօհրապ իր նիւթը կը քաղէ զրեթէ միշտ պօլսական և շրջակայ գաւառակներու կեանքէ: Ինքը թշնամին է միջակութիւններու և անոնց գոհնիկ մոլութիւններուն: Իր վիպակներուն մէջ կերևան բոլոր քօղարկեալ տգեղութիւնները, կեղծիքները, սուտ բարեպաշտութիւնները, մեծարուած ու յարգուած դասակարգերու անպատիժ մնացած սփիւնները և բարոյական ախտերը: Իր սփռ հանդարտ է և անողոր իրականութիւն մը ունի. անիկա ջղազրգուած գայրոյթներ և ոխեր չունի, այլ խորապէս գիտակ մարդու անստարկելի ճշմարտութիւն մը: Անիկա սոսկալի խարա-

զան մըն է, որ իրենց պատուանդաններէն վար կը զլտօրէ կեղծ կուռքերը:

Անիկա կը ճանչնայ նաև մարդկային թերութիւնները, հոգեկան սայթաքումները, ճակատագրական խռատութիւնները րնկերական կարգ ու սարքերէն ու ներողամիտ հեղձութիւնով մը ինչպէս նաև ուժեղ մարդու յատուկ գորովանքով կը մօտենայ սիրտի խնդիրներու:

Իր ներկայացուցած կնոջ տիպարները, ճշմարիտ կիւնը կը ներկայացնեն առանց սանտիմանտալ և երևակայական պաճուճանքներու. անոնք կը ներկայանան իրական ու շքեղ իրենց գեղեցկութեան և հրապոյրներուն մէջ, քայց միանգամայն այնքան ճշմարիտ իրենց սրտի տկարութիւններով, քմահաճօքներով, յարափոփոխ արամազրութիւններով, Զի զարմանար ինքը և ոչ ալ կը զարմացնէ երբ մէկ քանի գիծերով կը պատկերացնէ կնոջ կեղծելու ընդունակութիւնը սրտի խնդիրներէ մէջ: Իր վիպակներէն մէկ մասը ամփոփած է սա ընդհանուր տիպոսը զիրքի մը մէջ «Կեանքը ինչպէս որ է» և կարելի է ըսել որ ոչ մէկ զիրք այնքան ճշգրտամբար արդարացուցած է իր տիպոսը: Այդ զրքին մէջ ճշմարտապէս կը տեսնենք կեանքը ինչպէս որ է իր հարազատ իսկութեամբ և առանց սեթևեթի ու կարծես հեղինակը մեզ ըսել կուզէ. «Ի՞նչ հարկ դայթակղելու կամ զարմանալու, քանի որ այսպէս է իրականութիւնը», նոյն հատորին «Կարծեմ թէ» վիպակին մէջ կը տեսնենք ամենէն յստակ պատկերներէն մէկը իր աս դատողութեան: Ինքը սիրած է Աննիկ անունով աղջիկ մը, ինչպէս կը նրկարագրէ ինքը՝ «Ծոճբակին վրայ վազվզող ոսկի ճառագայթներէն աւելի, որոնք կրակի մէջ ինկող պղտիկ օձերու պէս գալարումներ, կծկումներ ունէին, մատղաշ ու արքենի հասակէն աւելի, որ քայուածքին մէջ՝ գեփիւռէն օրօրուոյ ոստի մը նազանքը կառնէր, իր վճիտ ու յստակ աչքերուն համար պաշտեցի զինքը»:

Ի՞նչ բան զինքը ամենէն աւելի կը հրապուրէ, «Այդ աննենց և անխարդախ բանը զոր կը տեսնէի, կըսէ, զէմիս աչքերուն մէջ, զիս կը յափշտակէր»:

«Աննիկիս սիրտը, կըսէ, քիչ մը անդին, այն բիւրեղէ

կաթիլններուն կը նմանէր, որոնք իրենց մաքուր ցոլացումը կորսնցնելու կարող չեն»:

Պարզ ու միամիտ աղջիկ մըն է անիկա որ իր սրտին բոլոր թափովը կը սիրէ զինքը. անարուեստ սէր մը, մաքուր և վճիտ և որուն միապաղաղ և բոլորանուէր հրապրքը կը պաղեցնէ զինքը վերջապէս: Կը տեսնենք որ Չօհրապ ինքզինքին համար ալ ներողամիտ չէ և ինքզինքին երբէք չի տար զոհուածի, խարուածի սրտառուչ դերը: Իր մտերիմ բարեկամներէն մէկը Իզմիրէն Պօլիս կուզայ ամուսնանալու համար, երբ ինքը տարիէ մը ի վեր բաժանուած էր Աննիկէն՝ «Այն խօլ արշաւին մէջ, կը խոստովանի հեղինակը, զոր կը մղէի կնոջական զրօսանքներու համար, աւելի հետաքրքիր ուղևորի մը պէս քան թէ ճշմարիտ վայելքի մը սիրոյն»: Ուրեմն Իզմիրցի երիտասարդը կընտրէ իր հարսնացուն և կուզէ կարծիքը առնել իր բարեկամին իր ընտրած աղջկան մասին:

Երևան կուզայ որ Աննիկն է անիկա: Հակառակ որ ինք եղած էր առաջին անգամ օրիորդէն հեռացողը, յուսախար կըլլայ, մտածելով թէ իր սիրոյն կորուստը անմխիթաբելի չէր եղած Աննիկին համար, բայց շուտով կըսթափի և նոյն իսկ բարեկամին պնդումներուն վրայ կը հարկադրուի ընկերանալ անոր խօսքիկային օրը: Հիմակ կը գտնուին արդէն հարսնացուին հիւրասենեակին մէջ, Աննիկ պիտի երևայ շուտով և ինչ պիտի զգայ երբոր զինքը տեսնայ: Գեղեցիկ տղերով վիպակագիրը կը նկարագրէ իր մտահոգութիւնները, իր ենթադրութիւնները, հոգեկան տագնապը: Բայց ահա Աննիկ կերևայ: Տեսէք թէ ինչ բնական պարզութեամբ մը կը պատմէ հեղինակը այդ վայրկեանը: «Այս ժամին հանդիսաւորութիւնը բնաւ չի շփոթեցնիր զինքը. վախս կը փարատի տակաւ ու կը զմայլիմ իր անսեթեթ ձևերուն վրայ. գլխու թիթի ու շնորհալի խոնարհութեամբ մը կը բարեւ մեզ, օտարականներու, հիւրերու ուզուած պաշտօնական բարև մը, ոչ շատ մտերիմ, ոչ շատ ցուրտ, իր անձին վրայ սրշափ մեծ իշխանութիւն ունեցող մէկն է այս աղջիկը. ոչ դող, ոչ յուզում կայ իր անուշ դէմքին վրայ. չի շիկնիր, չի շառագունիր»: Բայց աղջկեցուցիչը այս

ինքնազսպումը չէ. նշանած պարտնը իր հարսնացուին մօտ է և կը խօսին իրեն նայելով. հեղինակը դարձեալ մտահոգութեան մէջ է: Կրցան Աննիկ ծածկել իբր առջի սէրը. ահա նշան կընեն զինքը կը կանչեն, ահամայ կերթայ քովերնին: Վիպակը կը վերջանայ այս կերպ:

«Աննիկ կըսէ բարեկամս, քեզ կը ներկայացնեմ իմ խիստ, բայց խիստ մտերիմ ընկերս. դուք Պօլսեցի էք, հարկաւ իրար կը ճանչնաք քիչ մը, այնպէս չէ»:

Այս հարցումին, Աննիկ աղէկ մը իմ կողմս դարձաւ, անանկ մը որ պատուհանէն եկող լոյսը զիս սողողէ. աչքերը պղտիկցուց քիչ մը աւելի մեծ ջանք մը ընելով իր յիշողութիւնը ամփոփելու համար. արագ և ուշադիր նայուածքով մը ոտքէս դուրս քննեց զիս. ես ալ կը հետեւի հիմա իր նայուածքին բոլոր ճիգերուն. անկեղծ, բայց բոլորովին անկեղծ ջանք մը կընէր այդ նայուածքը զիս յիշելու համար ու չէր յաջողեր. այնքան որ ես իսկ հաւատալ կըսկսէի զինքը բնաւ տեսած չըլլալուս, վասնզի անննդ ու անխարդախ բան մը կար այս աշխատութեան մէջ, որով իր բոլոր կամքը կը գնէր զիս ճանչնալուն համար, այն անկեղծ ու անխարդախ բանը զոր միշտ դտած էի ես այդ աչքերուն մէջ. և վերջապէս կըրահացութեան մը յանդելով. բայց կերեայ չի կըրնալով բոլորովին հաստատ ու ապահով ըլլալ ըսածին, Աննիկ պատասխանեց բարեկամիս.

— Կարծեմ թէ տեղ մը տեսած ըլլալու եմ էֆէնտիին:

Ինչպէս կը տեսնէք, Չօհրապ հառաչանքներ չի արձակեր և ընթերցողին գուրջ չի հրաւիրեր իր խափուած մարդու պարագային վրայ: Աննիկին նկատմամբ ոչ քէն ունի, ոչ թշնամութիւն, այլ նոյն իսկ տեսակ մը զմայլանք, բայց մանաւանդ ժպտուն և ներողամիտ հեղուութիւն, և ասիկա Չօհրապի ամենէն յատկանշական գիծերէն մէկն է:

Իայց Գրիգոր Չօհրապի տաղանդը իր լրումին մէջ կը յայտնուի երբ կը պատկերացնէ Պօլսոյ մօտակայ դաւառներու կեանքը: Այդ անտառուտ և լեռնային դիրքերու մէջ հայ գիւղացին զլիսաւորաբար կզբաղի ծխախոտի մշակութեամբ և յարատեօրէն պայքարի մէջ է Ռէժիի գէպերուն հետ: Ծխախոտի մաքսաննդութիւնը դանոնք դարձուցած է

տեսակ մը անվեհեր մարտիկներ, որոնց քաջութեան, հար-
պիկութեան և յանդգնութեան արարքները կը հիացնեն
զինքը: Զօհրապի ուժեղ և անընկճելի խառնուածքը տեսակ
մը հանգունութիւն կը զգայ այդ խոնարհ կորիչներուն հետ,
որովհետև անոնք տարբեր ասպարէզներու մէջ իր հզօրայր-
ներն են: Եւ ինչ մեծազայելուչ պարզութեամբ ու ինչ զօ-
րովածքով կը նկարագրէ այդ տիպարները: Այդ սեռին մէջ
իր ամենէն գեղեցիկ վիպակներն են «Այինկան» և «Ճէյ-
րան»-ը:

Գրիգոր Զօհրապի տաղանդը մինչև մեր ժամանակնե-
րը հրրէք չի տկարացաւ. անիկա մէկ անդամէն ստացաւ
իր Թոխթը ու նոյն բարձրութիւնը ու կատարելութիւնը
պահեց իր բոլոր էջերուն մէջ: Նիւթը կարող է առաւել կամ
նուազ հրապուրիչ ըլլալ բայց իր ամեն վիպակները կը կը-
րին վարպետի կնիքը, առիժի թաթը, ինչպէս կըսեն Ֆը-
րանսացիք: Անիկա հարազատ արտայայտիչը հղաւ իր ժա-
մանակին և միանգամայն իր հզօր, հաւասարակչիս անհա-
տականութեան ու ան բոլորեց իր գրական գործունէու-
թեան ասպարէզը հանդարտ և ինքնավստահ քայլերով մէկու
մը որ իր սեփնական և ներքին ուժին զիտակցութիւնը ու-
նի, եթէ համեմատելով իր գրական գործունէութեան եր-
կար տարիները իր երկին քանակին հետ նուազ կը դաննեք
անիկա, որակի տեսակով ոչինչ ունինք զինքը մեղադրելիք:
Ըսենք թէ գրականութիւնը իր ասպարէզը չէր իր բաղ-
մազբաղ կեանքին մէջ հաղւաղէպ ովասխաներ էին այն ժա-
մերը զորս կրնար յատկացնել իր սիրական աշխատութեան:
— Իմ ամենէն մեծ հաճոյքս է կըսէր ինձի օր մը, գրական
էջ մը գրելը:

Եւ լրջօրէն կը մտադրէր օր մը քաշել քաղաքական և
փաստարանական ասպարէզներէն ամբողջովին նուիրուելու
համար արւեստին:

Մտաւորականներու ձերբակալութիւններէն քանի մը
շարաթ առաջ պատահեցայ իրեն զիպւածով:

— Ինչպէս էք, ինչ կընէք, հարցուցի իրեն:

— Կը շարունակեմ ձերանալ, պատասխանեց ինք:

— Մերանալը, վայելուչ կերպով ձերանալը մեծ արւեստ

մըն է, ըստ իրեն ու մենք պիտի տեսնենք թէ ասոր մէջ ալ վարպետ մը պիտի հանգիստանաք:

— Բաւականին ցուրտ և տխուր մխիթարութիւն մըն է ստիկա, ըսաւ, իր քաղցր և թափանցող աչքերը յառած իր ինններուօ:

Իրաւամբ վայելուչ կերպով կը ծերանար, ինքը որ տուած մը եղած էր կեանքի, ասպարէզի և զրականութեան մէջ: Իր մազերը բոլորովին ճերմկած էին և մորթը թառամած ու զեղնած էր լիարդի հիւանդութենէն, ուրկէ կը տառապէր, բայց աչքերը պահած էին իրենց աշխուժը, իրենց կեանքը ու իր հզօր հոգին կարտայայտէին կարծես անկասօրէն մարմնոյն քայքայումին, քաղցր և գորովագին տրիսթիւն մը կը ծածանէր իր ամբողջ անձին վրայ. սոսկալի և անխուսափելի դէպքերու նախազգացումը ունէր անուշտ. իր հոգին պահած էր իր արիւթիւնը, բայց յստակ կերպով կղզար տպիկար և նախանձոտ թշնամիին աններող ատելութիւնը որուն առաջին գոհերէն մէկը պիտի ըլլար ինքը:

Օսմանեան բարլամենթի մէջ Կ. Պօլսոյ իբր ներկայացուցիչ, իր դիտութեամբ և տաղանդով զբաւած էր ամենէն պատուաւոր տեղերէն մէկը: Իր կուռ, փաստացի և գեղեցիկ ճառերը յուզում յառաջ կը բերէին և յաճախ օրուան մարդը կը դառնար ինքը: Անիկա փառքը կրնար կազմել իր պատկանած երկրին. թշնամին կը խոնարհէր իր առաջ որքան ատեն որ նսարաւոր չէր ուրիշ կերպ ընել, բայց երբ ատելութեան զբօշակը պարզուեցաւ հայ ազգին դէմ, անմիջապէս խորհեցան իր մասին: Զօհրապ և Վարդգէշ չի հնազանդեցան առաջին անգամ ձերբակալման հրամանագրին, տուարկելով որ իբր երեսփոխան ըստ օրինի անձեռնմխելի են: Քանի մը շարաթ և տքը յաջողեցան զիրենք ձերբակալել և ճամբայ հանեցին դէպի Տիարպէթիք, ուր ուրիշ աքսորեալներու հետ պիտի տարուէին պատերազմական ատեանի առջև: Զօհրապ ճիշդ է որ իրապէս հիւանդ էր այդ միջոցին և խիստ բէմիմի մը կնիթարկուած: Ոչ մէկ ընէ չի մեղմացուց խստութիւնը զահիճներուն. զինքը տարին կայանէ կայան, աւելի ճիշդը քաշկըռտեցին աքսորավայրի ճամբաներուն վրայ:

Ի՞նչ զգաց ինքը: մեծասիրտ և խրոխտ առիւծը, երբ ինքզինքը դառաւ իր թշնամիներուն չար տրամադրութեանց ենթակայ. ի՞նչ դառնութիւնով լեցուեցաւ իր բարձր և պայծառ հոգին երբ առաջին պատահող զապթիլէն իր շարքաւորակ սիւուէթը ցցելով իր դէմ հրամաններ որոտաց: Ո՞վ պիտի պատմէ մեզի մեր մեծ և սիրելի տաղանդներուն վերջին մտածումները և վերջին խօսքերը որ արտասանեցին այնքան սոսկալի և զարհուրելի ժամերու մէջ: Մարմինը տկար, բայց հոգին հզօր և կենթադրեմ որ իր աչքերուն մէջ պահած արհամարհանքի և հեղնութեան փայլատակումը իր ապիկարու զազանարարոյ թշնամիների նկատմամբ. ա, նիկա հասաւ Գոնիա, Գոնիայէն Հալէպ, Հալէպէն Ուրֆա ուրկէ հասաւ իր մահուան լուրը: Պօլսոյ կառավարութիւնը իր այրիին պաշտօնապէս իմացուց այդ սև լուրը: Կըրնայ պատահիլ որ արքայի գծուարութիւններուն չի տոկալով մեռաւ, կրնայ պատահիլ, ինչպէս կը հաւաստեն ումանք, թէ սպաննած ըլլան զինքը: Ամեն պարագային իր զահիճները եղան իթաիհատականները, որոնցմէ՛ շատերուն մեծ ծառայութիւններ մատուցած էր և որոնցմէ մէկին մասնաւորաբար Սալիլ պէյին (բարլամենթի նախագահ) կեննքը ու ազատութիւնը փրկած էր զայն իր տան մէջ պահելով, հակառակ իր անձին սպաննացող վտանգներուն երբ բէաքսիօնի օրերուն իթիհատականները կը հալածուէին անխնայ կերպով:

Զօհրապի մահը մեծ և սասանեցնող տպաւորութիւն մը ըրաւ Կ.Պօլսոյ չմէջ: Զինքը կը սիրէին իր յանդգնութեան, իր ազատամտութեան, իր քաջութեան և իր ուժին համար: Մեր նպատակը չըլլալով խօսիլ իր քաղաքական գործունէութեան մասին, չենք կրնար մանրամասնութեանց մէջ մտնել, բայց իր մասին վերջացնելէ առաջամբողջացնելու համար իր յատկանիշերը, պէտք է ըսել թէ անիկա իր ամեն մէկ գործին մէջ եղած է, առանց որոշ կուսակցութեան պատկանելու, ազատամիտ, լայնախոհ և իր օժանդակութիւնը անվերապահ կերպով և ամբողջովին ընծայած է յառաջընթաց հոսանքներու և կողմերու:

90-ական թուականի գրական շրջանի մասին խօսած

ժամանակներս պարտաւոր ենք յիշել «Ծաղիկ» շարաթա-
թերթը, որ Արշակ Զօպանեանի խմբագրապետութեամբ կը
հրատարակուէր և որուն գլխաւոր նպատակն էր խմբել և
երևան հանել այն նոր տաղանդները, որոնք հետզհետէ կը
յայտնուէին և որոնցմէ ոմանք վարպետներ պիտի դառ-
նային իրենց կարգին: Ծառ մը ուրիշներու հետ այդ թեր-
թին մէջ է որ իրենց առաջին և փայլուն քայլերը առած
են գրական սուպարէզին մէջ Ռուբէն Զարդարեան, Որբեր-
եան, Յարութիւնեան կն:

Զօպանեան մեծ և թանկագին յատկութիւնը ունէր
ճանչնալու և գուշակելու տաղանդները և իբր ճշմարիտ գե-
ղարուեստագէտ յարգելու և զնահատելու իւրաքանչիւրին
անհատականութիւնը և խառնուածքը: Հակառակ իր երի-
տասարդ հասակին, ինքն արդէն վարպետ մըն էր և հան-
րածանօթ իր գեղեցիկ ոճին և գրական արժանիքներուն
համար: Ինքը եղած է տեսակ մը երէց եղբայր մեզ համար
որ մեզ իւրաքանչիւրս առաջնորդած է մեր սեպհական
ճամբաներուն մէջ: Մէկ կողմէն ծանօթացնելով Եւրոպական
ժամանակակից գրողները և միւս կողմէ արժարձելով յիշա-
տակը մեր մօտիկ անցեալի փառքերուն, անիկա եղած է
թանկագին ուսուցիչ մը և մեծ արժանիքներու տէր առաջ-
նորդող մը: «Ծաղիկ»ը ճշմարիտ դպրոց մըն էր մեզ հա-
մար, որուն ազդեցութիւնը երկար ատեն նեցուկ եղած է
մեր առաջին քայլերուն: Դժբաղդաբար երկար չի տևեցին
այդ բոլորը: Թրքահայոց գլխաւոր դժբաղդութիւնը այն ե-
ղած է, որ ոչ մէկ ատեն դոնէ 8-10 տարի յաջորդաբար չեն
վայելած խաղաղ և հաստատուն կեանքի բարիքները: Լաւ
սկզբնաւորութիւններէ հտքը երբէք բաղդը չենք ունեցած
մեր ձգտումներուն և յոյսերուն լրումը տեսնելու: Սուլթան
Համիդի խելագար ճնշումները և հալածանքները սկսած էին
արդէն. հայկական գաւառները կը տքային բռնապետու-
թեան թաթիրուն ներքև: Պապը Ալիի ցոյցը և նման դէպ-
քեր մահացու ցնցումներ կը պատճառէին նոյն իսկ մայրա-
քաղաքին մէջ: Վրայ եկան Մայիսեան յիշատակագիրին օ-
րերը: Դեսպաններու միահամոյն և վճռական դիմումներու
վրայ սուլթանը ձգձգումներէ, տատանումներէ հտքը հար-

31002



կադրուած ստորագրեց հայկական բարենորոգումներու խոստումը: Ոգևորութիւնը և խանդավառութիւնը չափ չունէր: արդէն իսկ, մենք տակաւին պատանիներ, կը խորհէինք թափւիլ մեր բնաշխարհը, տանել մեր խանդը ու ոգևորութիւնը գծրադղ ու արիւնաքամ դաւառներու մէջ և ազգային մեծ թափով սկսել շերտածնունդը: Բայց բարենորոգումներու խոստում խոստումները մէկ մտածում կը թելադրեն թուրքերուն: Կոտորած. միակ իրական պատասխանն է, որ կը ստանանք միշտ մեր արդար պահանջումներուն փոխարէն: Ապստամբութեան զրպարտութիւններ և Սասունի կոտորածը. — 95 թուականը, արիւնոտ թուականը կսկսէր. մէկ տարուան մէջ 300,000 հայեր զոհ կերթային գրեթէ բոլոր հայաբնակ գաւառներուն մէջ: Պոլսոյ մէջ և ամենուրեք ձերբակալութիւններ, թերթերը կը փակուին, մտաւորականներէն ոմանք կը յաջողին մեկնիլ արտասահման, իսկ երկրին մէջ կը տիրէ այլևս զարհուրած թմբութիւն մը: Թիստ և կամայական գրաքննութիւնը կը խամբեցնէ ամեն բողբոջում. սարսափ գաւառներու մէջ, սարսափ մայրաքաղաքին մէջ, որովհետև այլ ևս հայ ըլլալը յանցանք մըն է և ամեն մէկ հայու կեանքը ու ազատութիւնը կախում ունի ամենայնոք սրիկային, խաֆիէյին քմահաճոյքներէն:

Այդ դժոխային երկրէն մեկնիլը դիւրին չէր, բայց անկարելի ալ չէր ինչպէս այսօր: Եւրոպական պետութեանց ներկայացուցիչները մեծապէս կօծանդակէին, բայց մանաւանդ օտար զբօշակ կրող նաւերը ամեն ինչ հնարաւոր կը դարձնէին և զաղթականութեան մեծ հոսանքը սկսաւ դէպի Կովկաս, Եւրոպա և Ամերիկա:

Մտաւորականները մեծ մասով ապաստանած էին Բարիդի մէջ, այդ զեղեցիկ և հիւրընկալ մայրաքաղաքին մէջ. տեսակ մը կեդրոնացում էր հոն, ուր նոր թև առած պատանիներ ինչպէս հին վարպետներէն շատերը խմբուած էին: Հայկական կոտորածները զարհուրելի կերպով մը պիտի ազդէին բնականաբար մեր մտայնութեան վրայ: Պահ մը մոռցանք մեր զեղեցկապաշտի և զուտ արուեստի հակումները, մոռցանք անձնական զգայնութիւնները և սպաւորութիւնները և յարատևօրէն կապրէինք մեծ ոճիրին առթած

արիւնոտ արհաւիրքին մէջ: Մղձաւանջը կը տիրապակեր մեր բոլոր տրամադրութիւններուն վրայ և մեր հոգիները կաշկանդուած էին սոսկումով և վիշտով: Ու հակադրելու համար կոտորածի և հալածանքի պատմութիւնների ջլատիչ թշուառութեանը կը փնտռէինք անունները և արարքները այն քաջներուն, որոնք ունէ տեղ և ունէ կերպով ծառայած էին թշնամիին դէմ, որոնք ունէ դիմադրութեան շարժում ուր-ւազծած էին, որոնք ինկած էին անհաւասար պայքարին մէջ, կամ յաղթանակած հերոսաբար: Անոնք մեր սուրբերն էին, մեր կուռքերը և անոնց անուններուն կամ անոնց յիշատակին կառուելիք հաւատալու համար զայլք որերուն: Այդ հոգեկան վիճակը չէր կրնար չազդել մեր գրականութեան վրայ: Ու այդ շրջանի և ազգային հաւաքական զգացումներու ամենամեծ և հանճարեղ արտայայտիչը հանդիսացաւ Միամանթօն (Ատոմ Եարճանեան):

Միամանթօի մասին խօսելէ առաջ մի անգամ ընդմիջա կուղեմ լուսարանի այն սխալ կարծիքը թէ Միամանթօ ազգուած է սիմպոլիստ գրողներէ և զլիսաւորապէս Պելճիքացի մեծ բանաստեղծ Վէրհարէնէ: Այդ ազդեցութիւնը աւելի ուշ եկած է և ունէ կերպով չէ նշանած հայ բանաստեղծին ինքնագիտութիւնը: Միամանթօ իր դիւցազներգութիւններով, իր վրէժխնդրական խոյանքներով, իր մարգարէական շունչով հայկական դաժան իրականութեան արգիւնքն է. անիկա արիւնով ողողած դաշտերու գերազոյն և թունաւէտ ծաղիկն է. հողին է այն հոգիներուն, որոնք դահիճներու սուրբերուն փայլատակումը տեսան և հողին է այն հոգիներուն, որոնք իրենց արևով ու արիւնով մեր ոգորումներու, դիւցազնական և յուսահատական պայքարներու պատմութիւնը գրեցին: Միամանթօն դաժան և հրաբորբոքատեղութիւնն իսկ է ամբողջ ցեղին, թշնամի ցեղին դէմ, ինքնարուխ և անզսպելի ժայթքումն է անլուր մարտիրոսութիւններու ենթարկուած բազմաշաշար հայ ազգին: Ու պէտք էր ապրած ըլլալ այդ շրջանը, պէտք էր որ ունէ հայ իր արցունքը և արիւնը խառնած ըլլար արցունքի և արիւնի ծովերուն, ըմբռնելու համար թէ որքան ցուր, վրէժը և հաւատքը Միամանթօին, ցաւն էր և վրէժը ու հա-

ւատքը ամեն մէկ հայու:

Բնիկ Ակնցի, փոքր հասակէն տեղափոխուած էր Պօլիս. բայց իր հոգին կը կրէր իր հայրենակիցներու յատուկ նրբազգածութիւնը, տալաւորականութիւնը և բարձր արուեստի ընդունակութիւնները: Վտիտ և զալկազէմ պատանի մըն էր երբ զինքը ճանչցայ առաջին անգամ Բարիզի մէջ: Իր անհանգիստ, սուր և թափանցող աչքերուն մէջ կը կրէր ցնորական արբեցութիւնը հայ ազգին: Իր խօսքերը զրեթէ անհասկանալի էին, այնքան առեղծուածային և խորհրդաւոր կը թուէին անոնք: Իր մտածումը երբէք չէր արտայայտուէր լրիւ և հանդարտ եղանակով մը, այլ ոստումներով, ցասումներով, անջատ բառերով, որոնք առաջին անգամ անկապակից կը թուէին: Բայց իր հոգին ընդունակ էր նաև դորովագին միամտութիւններու, որոնք երկար չէին տևեր սակայն ու յանկարծ կը մթագնէր չես զիտեր ինչ ներքին փոթորկի հետևանքով: Իր սէրերը ու ատելութիւնները տազնապններ էին, որոնք միշտ սաստիկ էին ու բուռն ու երբէք այդ վտիտ ու հիւանդագին երիտասարդը չի գիացաւ միջակ զգացումներու անդորրութիւնը:

Իրիկուն մը ուսանողի մը սենեակին մէջ անիկա առաջին անգամ ըլլալով կարդաց իր բանաստեղծութիւնը «Մահուան Տեսիլք».

Կոտորած, կոտորած, կոտորած

Քաղաքներուն մէջ և քաղաքներէն դժուրս

Նւ բարբարոսներն արիւններով կը դառնան

Մեռելներուն ու ողբարներուն վրայէն,

Ազոաւներու բաղմութիւններ կանցնին վերերէն,

Արիւնոտ բերաններով ու զինովի քրքիչներով...

Այդ բանաստեղծութիւնը յայտնութիւն մը կաւ մեզի համար և անկէց բաւական ժամանակ ետքը, երբ Յարճանեանին անունը երևաց «Անահիտի» մէջ, մենք Բարիզի այն ժամանակուան հայ ուսանողներս, զիտէինք և զինքը կը ճանչնայինք արդէն, իբր սպաղայ ամենէն հարազատ փառքերէն մէկը մեր զրականութեան:

Մեր այն ժամանակուան ուսանողութիւնը, կարծէ խօսիլ այդ շրջանի մասին, որովհետև անիկա մեր գալիք զրա-

կան օրերուն վրայ ահազին և տիրակա՛ն ազգեցութիւն ունեցած է: Մենք խումբ մըն էինք իտէալիստ երիտասարդներու, որ ազգային ահաւոր զէպքերու առթած սոսկումէն և թմրութենէն հետզհետէ սթափելով արդէն իսկ կը խորհէինք մեր կատարելիք դերի մասին: Կարծես ազգային վերածնունդի բոլոր հոգը բեռցուած էր մեր վատուժ ուսերուն վրայ: Ամեն մէկս կը կարծէինք որ միսիօն մը ունինք կատարելիք ու կը պատրաստուէինք նոր օրերու: Մեր մէջ չի կային ասպարէզի մը հետամտողներ, մեր մէջ չի կային անձնական գործերի մասին խորհողներ: Մենք տեսակ մը միստիքներ էինք և մեր մէջ կար անօրինակ և խորհրդաւոր ուժ մը որուն զգացումը մեզ կանխահառ հեղինակութիւնով մը կը զօրացնէր: Չարքաշ, հոգեպէս և ֆիզիքապէս չարչարուած, չքաւոր ու մեր չքաւորութիւնը կրելով հոգինիս ամուր, նակատնիս բարձր, տեսակ մը պարծանքով ու գրեթէ դոռողութեամբ, մենք կը դիմէինք Չերմեռանդօրէն զէպ ի նպատակակէտ մը, որ թէև տակաւին մեզ չէր հրկար պայծառութեամբ, քայց որուն գոյութեան անասան հաւատքը կը կրէինք: Մեր խումբի մէջ էր ի միջի այլոց Սուրէն Պարթևեան, որ արդէն իսկ իր ռճաբանի մտահոգութիւններով կը տուայտէր և որուն սեղմ, մշակուած, և աշխատուած արձակը կը կազմաւորուէր:

Հետզհետէ աղէտին արհաւիրքը կը տկարանար մեր մէջ և ազգային ցաւը իր սրութիւնը կորսնցնելով, կը ստանար հետզհետէ այն գորովագին և քաղցր տխրութիւնը, որ մեր զրական սերունդին ամենէն յատկանշական գիծը եղած է: Հետզհետէ կը կրէինք ֆրանսական գրական նոր գպրոցներու ազգեցութիւնը գրեթէ ուղղակի կերպով մը: Չէինք քաւականանար այդ ազգեցութիւնը կրելով, այլ նաև կը մասնակցէինք պայքարներուն և երկնակամարին վրայ նոր բարձրացող աստղերուն առթած խանդավառութեանը: Նոր միստիքականութիւնը իր գեղեցիկ և խաղաղ մեկամաղձութեամբ, իր հոգեկան կեանքի արտայայտութիւններով կը պատշաճէր մեր արարւմ և երազող հոգիներուն, Պառնասիան գպրոցի խիստ և մարմարակերտ ձևաւորմները, ոճի և դասաւորութեանց բիրեղեայ մաքրութիւնը օտար

չէին մեր բնազդներուն, որովհետև մենք այ վերջապէս մեծ
և դասական ազգի մը թոռներն էինք և մեր հայերէնը սոր-
ված էինք Եզնիկի, Եղիշէի և Թորենացիի հանդիսաւոր, ներ-
գաշնակ և մեծափայլուչ ոսկերարքաոին մէջ: Իրապաշտ
զպրօցի դեռ կանգուն պատուանդաններուն քով արդէն իսկ
կը բարձրանար վերը յիշած գրական զպրօցներուն հետ
զուգընթացաբար խորհրդապաշտ (symbolisme) զպրօցը, որ
այնքան արագ և մեծազդորդ համբաւով մը տիրեց քօլոր
քաղաքակիրթ ազգերու գրական միջավայրներուն:

Կը կարծէի առհասարակ թէ ազդեցութիւն կրելը կը
նշանակէ ամբողջապէս ենթարկուիլ, ձուլիլ օտար մտքին
և ձևերուն: Այդ չէ որ ըսել կուզեմ ես: Օտար և հարուստ
գրականութենէն ազդեցութիւն կրելու, անով սնանկու և
անկէ պատշաճ չափերով հարստութեան տարբեր իւրացնե-
լու համար անհրաժեշտ է ունենալ ոչ միայն մեծ ընդունա-
կութիւն, այլ նաև ահասկ մը հանգունութիւն չոգեկան մի-
ճակներու, ցեղային ոգիի, բնազդական նոյն ձգտումներ,
հռչակներու մերձաւորութիւն և վերջապէս ու մանաւանդ
համարժէք հաւաքական թափ մը նոյն թօնչքով սլանալու,
նոյն ձևերով երազելու, սիրելու և հիանալու: Թրքահայն
առհասարակ, բայց մանաւանդ Պօլսեցի հայը իբր միջերկ-
րականեան ժողովուրդ, մեծ մերձաւորութիւն մը զգացած
է դէպ ի լատինական ազգերի մշակոյթը և այդ իսկ է պատ-
ճառը, որ բարիդեան գրական միջավայրը ոչ միայն օտար
և խորթ չէր թուեր մեզի, այլ նոյն իսկ կարծես թէ կը հա-
ժապատասխանէր մեր անսահման զգացումներուն, մեր գե-
ղեցկապաշտական բնազդներուն, մեր վերացական մտքին,
մեր ձևի ու ոճի, լեզուի ու ներգաշնակութեան համար ու-
նեցած հակումներուն:

Պելճիքացի երկու Ֆրանսագիր հանճարներ յայնուում
էին այդ օրերուն, Վէրնարն և Մաթէրլինկ: Այդ երկու հըս-
կայներուն ազդեցութիւնը անուրանալի է մեր ժամանակա-
կից գրականութեան վրայ: Երկար պիտի ըլլար հոս վեր-
լուծել այդ ազդեցութեան հանդամանքները, բայց խօսքեր-
նիս մասնաւորելով Սիամանթօին վրայ, կրնանք ըսել թէ
իբ ինքնատիպ, հանճարեղ և մարգարէական բանաստեղ-

ծահանութիւնը կազմուորելու, իր վերջնական ձևին մէջ զայն արձանացնելու, տալու համար իր ոգորումներուն հիացումներուն և ցառումներուն համարժէք կշտոյքը (rytme) օգտուեցաւ Վէրհարէնի հանճարէն: Ու Պելճիքացի տիտանեան բանաստեղծէն այդ կէբարով կարենալ օգտուիլ ոչ թէ կը նսեմացնէ Սիամանթօի գրական փաստքը, այլ պատիւ կը բերէ իրեն:

Սիամանթօի բանաստեղծութիւնը կարտայայտուի դիւցազներգութեան ձևով, անիկա իր մարմարկերտ և արձանային ձևերուն մէջ կը մարմնացնէ հսկայական պայքարը մեր հերոսներուն: Անիկա կը պանծացնէ փառքը յաղթողներուն ու մանաւանդ անանցանելի և ստեղծագործող յաղթանակը կուի մէջ ինկածներուն: Հոն ոչ մէկ տողի մէջ չի պիտի գտնանք ողբագին լալկանութիւնը պարտուած ազգի մը դարաւոր ստրկութեան ցնցոտիներէն մի անգամ բնոյ միջոց մերկացած է իր արիական հոգին. անիկա գտած է ձայնը իր ազնուական ցեղին ու ճշմարիտ բարբառը չարչարուած բայց անընկճելի ազգին: Ինքն իսկ կը ձևակերպէ իր հոգեկան կերպարանքը հանդէպ սասանեցնող աղէտին ու հանդէպ վրիժառու և արի դիւցազներուն որ իրեն հետ կը խօսին իր տեսանողի վերացումներուն միջոցին:

Ո՛վ դուն, ողջակիղումներու ուխտուած սպիտակ տըղայ, կը կոչեն զինքը. ինքը իր մտաւորականի տժգոյն և վտիտ սիլուէթը կը հակադրէ պայքարողներու արիական և ջլատինդ ձևերուն. ու ինչ որ ինքը չէ կարող կատարել իր բազուկներուն զօրութեամբը, կը փառաբանէ իր եղբայրներուն վէս քաջութեանը մէջ:

Ուրեմն փառք և օրհնութիւն ձեզի,

Դուք մեր կուռքերը մարմարեղէն ու մեր Սուրբերը
պայծառ,

Դուք հսկաները. դուք՝ Առաքեալները, դուք՝

Ահաւորներդ բոլոր

Փառք և օրհնութիւն ձեզի:

Երկար և անսպառ պիտի ըլլար Սիամանթօի սրացումներուն զեղեցկութիւնները մի առ մի թուել. առանձին դասախօսութեան մը և ստուար հաստրներու նիւթ կրնային

կազմել անսնք. բայց այդ մեծ հայ բանաստեղծին սիրուէթը ուրուագծած միջոցնիս չենք կրնար չի խօսիլ իր մարգարէական շունչին վրայ, որուն սև կողմը աւաղ մասամբ իրականացած կը տեսնենք այսօր և որուն լուսաւոր շողիւններուն տուած խոստումներուն կըսպասենք տակաւին:

Բանաստեղծը յաճախ կը խօսի իր մահւան մասին: Ահաւասիկ իր տողերը.

Ըսէք, դէպի ո՞ր մահը գաժանօրէն եղերական

Մեր հողինները՝ հողին փառքէն վիրաւոր՝

Ու անոր ցնորքի ճամբաներէն տժգունած:

Ո՞ր հեռաւոր հորիզոններէն սգաւոր՝

Տրտմօրէն պիտի երթան:

Բանաստեղծութիւնը կը շարունակուի մահերգական ամենի ընթացքով մը, ուր մահասարսուռ փոթորիկի մը մէջ շարաքաստիկ և գիշատող թռչուններու խօլական սգարովը արհաւիրքներու ամենէն սոսկալին

Խաւարին մէջ, անձաւին տակ՝

Անվերջօրէն սրակիցին:

Ու իրենց լացերը գիւային ու գինով,

Ուրկէ գետինը ինկած հողիս իր վախէն,

Աչքերը վեր ինձի համար,

Իր վիրաւոր աչքերը դէպ ի վեր՝

Կոյսի մը պէս դողահար,

Հողին վրայ ծունկի եկած կաղօթէր . . .

Ու ևս, անմխիթար,

Հեռաւոր հողիններու պայծառ լացն իմ վրաս,

Ուրիշ անձանօթ հորիզոններէ

Գիշերներով իմացայ:

Երբ այսօր մտաբերենք պահ մը այն մղձաւանջը, որուն մէջ ապրեցան թրքահայ մտաւորականները ու նաև այն քստմեկլի մահը, որով շատերը մահացան, այս տողերը դարձուրելի, ահաղին ու եղերական նշանակութիւն մը կուտենան ու մենք չենք կարող դադրիլ մեր հոգեկան աչքերով յաւերժօրէն տեսնելու հայ մարգարէական բանաստեղծին վրէժխնդիր ու ցաւատանջ հողին, որ ուրիշ բանաստեղծութեան մը մէջ կը մրմնջէ.

Ու բարեկամներս թու՛նաւսր ծաղիկներ բաղեցին
Իմ հեռաւոր գերեզմանս դարդարելու համար,
Բայց իր եղերական մահուան դարհուրելի յայտնատե-
սութեանն մէջ իսկ Սիամանթօ չի մոռանար իր անպարտե-
լի իտէալը, վերջնական յաղթանակի հաւատքը մեզ կտա-
կելէ:

Եւ ահաւասիկ դեռ երեւո՛ստ, անվարժ քնարս աղմկա-
յո՛յզ,

Որ պարտութենէս, օր մը, իմ գողգոջուն ձեռքերուս
մէջ ջախջախուեցաւ...

Եւ ահաւասիկ, վերջապէս բեզի՛ իմ վաղնջական սուրս
պողպատեայ,

Որովհետեւ իմ յաղթուածի բազուկներս անարժան ե՛ն
անոր բոցին...

Եւ դո՛ւն ընկեր, արդէն գիտես արիաքար բալել՝
Մեծ նպատակին այն ազատաբեր ճամբաներէն.

Ուրկէ բու երկաթեղէն քայլերդ, հաղարաւօրներու
քայլերուն հետ,

Յաղթանակներու խոտապուած հնչիւնը
պիտի հնչեցնեն...

Բայց բանաստեղծը ապագայ օրերու այսպայծառ յայտ-
նատեսութեան միջոցին վերջին խնդիրք մը ունի.

Եկու և բու բարեկամի և սիրուածի մատուընհրովդ
գորովածանը,

Այն երկու կաթիլ լոյսը որոնք աշուըններս յոյսով
և հպարտութեամբ կաղամամնդեն,

Եկու դանոնք յաւերժութեան մը համար դէպի
խաւարը փակելու...

Որովհետեւ Յոյսին ձայնէն, ինչպէս ձայնէն
փրկութեան, կամ ձայնէն տառապանքին

Կրնայ ըլլալ որ իմ մեռեալի աշուըններս՝ նորէն
արցունքոտին...

Անհրաժեշտ է հողեկան գազաթնակէտի մը հասած ըլ-
լալ իր լիութեանը մէջ ըմբռնելու և գնահատելու համար
Սիամանթօին բանաստեղծութիւնները. հարկ է որ Տառա-
պանքին սրբազան մկրտութիւնովը նուիրագործուած ըլլայ

հոգին, որպէսզի կարող ըլլայ հաղորդակցութեան մէջ մըտնել բանաստեղծին հոգիին հետ, որ հոգին է տառապած ազգին:

Միամանթօի բանաստեղծութիւնները հաւաքւած են հետեւեալ ընդհանուր տիպոսներուն ներքեւ «Իր ցաղնօրէն», «Հոգեկտորքի և Յոյսի ջահեր», որոնք կարտայայտեն ԶԵ-ական թուականներու արհաւիրքները և վրէժը. — «Կարմիր լուրեր բարեկամէս», զրուած են Ատանայի արհաւիրքներու ազդեցութեան ներքեւ. իսկ «Նայրենի հրաւեր»ը Սահմանադրական բէթիմի օրերուն տարագրեալ հայերը դէպի հայրենիք հրաւիրող իր բանաստեղծութիւններն են, որոնք գրւած են զխաւորապէս Ամերիկայի մէջ «Ամբողջական գործը» որ իր մէջ կը բովանդակէ վերև յիշածներս Ամերիկահայ հրատարակութիւն մըն է:

Միամանթօն ծնած է 1877-ին Ակնայ մէջ, Փոքր հասակէն տաղափոխւած է Կ. Պօլիս և աշակերտած է Պէրպէրեան վարժարանին: ԶԵ-ական թուականներէն հոքը անցած է Բարիդ և մաս կազմած է այն մտաւորականներու երիտասարդ խումբին, որու մասին խօսեցայ քիչ առաջ: Պահ մը տպրած նաև ժրնի և յետոյ Ամերիկայ Օսմ. Սահմանադրութեան հռչակումէն հոքը այնքան ուրիշներու հետ ինքն ալ վերադարձաւ Կ. Պօլիս: Զանազան առիթներով քաղակայելէ հոքը անգութ մայրաքաղաքէն, պատերազմի միջոցին դանուեցաւ հոն: Ինքը առաջին ձերբակալիւներու շարքին մէջ էր և Այաջ արսորուեցաւ: Զանազան շարաքատիկ լուրեր հասած են իր և ուրիշներու մասին. ոեկ յըստակ տեղեկութիւն շուներք այլևս: Միամանթօ այնքան ուրիշ թանկագին կեանքերու հետ ընկլուզուած է թրքական խաւարին մէջ: Սպաննուած է իսկապէս, ինչպէս ոմանք կը հաւատան և ճիշդ են արդեօք այն զարհուրելի մանրամասնութիւնները, որոնք հասած են մեզի իրենց սպանութեանց պարագաներու մասին: Կամ եթէ տակաւին կապրի իր ազնուական և վէս շունչը թր զնտանին խորը և ինչ բստմնելի դահիճներու քինախնդիր աչքերուն տակ կողակարի: Անըստեղծութիւնն է միայն որ յոյսի վերջին թելը դեռ կը պահէ մեր մտածումներուն մէջ:

Այն միջոցին որ հայ մտաւարականութեան ամենէն կենսունակ տարրերը տարազիր և հալածական կը մնային արտասահմանի մէջ, Կ. Պօլիս իր ուժերէն զրկուած և կըղ-զիացած դաւառի հայութեան հոծ դանդուածէն, տարիներու ընթացքին կը վերագտնէր տեսակ մը խտրութիւն անդոր-րութիւն: Հալածանքները միշտ կը շարունակուէին և միտ-քը ենթարկուած էր տեսակ մը խեղանդամութեան: Հրէշա-յին կերպով ծիծաղաշարժ գրականութիւնը կը սպաննէր, կը խեղդէր ամեն սրացում և ամեն ձգտում: Միջակ և երկրոր-դական գրողները իրենց գրիչը պատշաճեցնելով օրուան պայմաններուն, թերթիքը կը լեցնէին իրենց սնամէջ և ու-նայնամիտ մտքի փշրանքներով: Լեզուն օգտուելով իւր դի-րաթերութիւնէն նախադասութիւններու տեսակ մը ճարտար խաղ էր որ կը ցուցադրէր և հեռանալով միտք մը, տալա-ւորութիւն մը կամ զգացում մը արտայայտելու իր նպա-տակէն կը դառնար ունայն և անբովանդակ փոփոխութիւն մը, հազիւ թէ պահպանելով տեսակ մը հնչական ներդաշ-նակութիւն: Այս ամուլութեան վիճակն է որ միմիայն նկա-տողութեան առնելով այնքան խստօրէն քննադատած են Կ. Պօլսոյ հայ գրականութիւնը, առանց պահ մը իսկ մտածե-լու թէ մենք թրքահայ ճշմարիտ գրագէտներս, մենք անու-ջիներն էինք այդ վիճակը արհամարհող: Գծբազդաբար տարիները կը դատրէին և հակազդեցութիւնը կուշանար: Անպատիժ մնացած զրշակները վարպետի հովեր կառնէին և իրենց գիրին արտադրութիւններով կողողէին զրական ասպարէզները: Նոր սերունդը զպրոցներու մէջ և այլուր այդ վատուժ սնունդովը կը դաստիարակուէր: Ըշմարիտ աղէտ մը կրնայինք համարել ասիկա, եթէ հետզհետէ զրա-կան ճշմարիտ խառնուածք ունեցող անձեր չի յայտնուէին կամ արդէն գոյութիւն ունեցողները վերստին չերևային թիւրք կառավարութեան գաժան խստութիւններէն ու է ճարտարութիւնով մը փրկելով իրենց մտքին ու հոգիին անքանարարելի ազատութիւնը: Երկու եզանակի վրայ զը-րագէտը համեմատաբար ազատ էր ինքզինքը արտայայտե-լու: Սէրը և բարքերու ուսուցիչութիւնը. — բնութեան նկարագրութիւններն իսկ յաճախ կասկածներու առիթ կըն-

ծայէին: Հետզհետէ արտասահմանէն իրենց բանաստեղծութիւնները սկսան զրկել սակայն Վահան Թէքէեան, նրբագագ և ճաշակաւոր բանաստեղծ, երւանդ Օտեան, մեծ երգիծարան ու Տիրան Չրաքեան, միստիք փիլիսոփայ որուն կրօնական մեծամոլութիւնը հետզհետէ յիմարութեան սահմանները մտաւ: Այդ օրերու տաղանդաւոր գրողներէն պէտք է յիշել նաև Չիֆթէ-Սարրաֆ, որ իր մանրակրկիտ դիտողի և իրապաշտ գրագէտի ամբուլութիւններով, միացած վերը յիշած հեղինակներուս, յաջողեցան մոռացած լիճը ալեկոծել և նոր շունչ ու թարմութիւն մտցնել գրական միջավայրին մէջ:

Բայց նոր հոսանք մը, առողջ և կենսաւէտ հոսանք մը պիտի գար ճշմարիտ կեանք և սքեւութիւն տալու այդ գրական թմրութեան: Ատիկա գաւառական գրականութիւնն էր, որուն գլխաւոր ներկայացուցիչներն էին Ռուբէն Զարգարեան և Թլկատինցիին Պարբերդէն, Արտաշէս Յարութիւնեան՝ Մալխարայէն և Դեղամ Մուշէն:

Իրենց կարգին այս գաւառացի գրողները հարկադրուած սահմանափակելու իրենց նիւթերը, միւս կողմանէ կը յայտնուէին ներշնչման հարազատ և հզօր թափերով, բնաշխարհի մասնայատկութիւններով և իրենց գաւառներու յատկանշական արտայայտութիւններով: Մոռացած լիճը, որ Պօլսական գրականութիւնը կը ներկայացնէր այն ժամանակ իր բոլոր գորտերուն վայնասուններովը պատասխանեց այս անուրանալի տաղանդներուն: Բայց անոնք, որոնցմէ սմանց անունները արդէն ծանօթ էին 95-ական թուականներէն, այնպիսի ծարաւ մը յագեցնելու կոչուած էին, այնպիսի պահանջքի մը գոհացումը կը ներկայացնէին, որ ժողովուրդին հանճարը ըմբռնեց ու սիրեց դիրենք ու անոնք յաղթականօրէն հաստատուեցան իրենց պատւանդաններուն վրայ: Թլկատինցիին սուր հեղնութիւնը և գաւառական համը, Արտաշէս Յարութիւնեանի նրբաճաշակ, խոհուն և խմաստուն բանաստեղծի հանդարտ լրջութիւնը և Դեղամի գաւառաբարբառին ընդմէջէն նշմարուող գրական տոկուն գեղեցկութիւնը նոր շունչ և նոր շեշտ ներշնչեցին թրքահայ գրականութեան: Անոնք իրենց հարազատ լեզուով եկան ցը-

բելու նազանքները շղարշային և ժանեկային փափկութիւններու, ունայն նախադասութիւններու և երևան բերին իրենց նիւթին և ձևին ամբակուռ յաղթանակովը բոլոր փոքրութիւնը միջակ բանաստեղծներու ներշնչման աղբիւրներուն: Գաւառական դրականութեան ամենէն յատուկ և անուրանալի վարպետներէն մէկն էր Ռուբէն Չարգարեան, որուն վրայ պիտի ծանրանանք մասնաւորապէս:

Ռուբէն Չարգարեան իր անձով և դրականութեամբ մեզ կը ներկայացնէր Խարբերող իր ամենէն հոգեկան և նրբին իսկութեանը մէջ: Իր աչքերուն իմացական թափածութիւնը և իր էջերուն իմաստուն և բանիմաց տխրութիւնը նոյն ներշնչման աղբիւրէն բղխած էին: Խարբերող խոսքն և բիրտ գաւառ մը չէ. հին քաղաքակրթութիւններու հետքերը, Տամասկոսը և Հալէպը իրենց հնամենի նրբութիւնները թողած են հոն և խարբերողին գեղեցկագիտական աւանդութիւններ ունի ու իր հոգին ընդունակ է անմիջապէս որդեգրելու նոր գեղեցկութիւններու և նոր քաղաքակրթութեանց ճաշակը: Այս ընտիր յատկութիւններու տեսակ մը համադրական արժէքը կը ներկայացնէր Չարգարեան, որուն տաղանդը կարտայայտուի երկու որոշ գրական սեռերով: Վիպագրութեամբ և աւանդավէպերով, հէքիաթներով: Այս երկրորդ սեռին մէջ Չարգարեան մնաց անդուգական վարպետ մը:

95-ական թուականներուն անիկա իր գրական սկզբերութիւնը ըրած էր շատ փայլուն կերպով մը: Համիտեան շրջանի դաժան օրերուն երբ խօսքն ու գիրը մասնաւոր հաւածանքի մը ենթարկուած էին, անիկա մնաց երկար տարիներ աղնուական լուսնի մը մէջ. այդ միջոցին ինքն ալ այնքան ուրիշներու հետ բանտարկուած էր Խարբերողի բանտին մէջ: Ազատելով իր բանտարկութենէն, բնապետութեան վերջի տարիներուն է որ կը յայտնուի կրկին իր թաղածալի, քաղցր ու միանգամայն ուժեղ գրականութեամբը փրկելու պատիւը այն ժամանակեայ անկեալ գրական շրջանին: Վերջապէս ինքն ալ կը յաջողի անցնել արտասահման և Ֆիլիպպի մէջ կը վարէ իմբազրութիւնը «Ռազմիկ» թերթին, ուր մէկ քանի գաւառական գեղեցիկ էջեր տուած է:

Մասնակցելէ ետքը Բարեգիւ մէջ գոյացած թրքահայ կօնկրէին Սահմանադրութեան հոչակումէն անմիջապէս ետքը փութաց Կ. Պօլիս, ուր գրեթէ տարի մը ետքը ստանձնեց «Ազատամարտ»ի խմբագրապետի պաշտօնը։ Խմբագրականներու, միտքով լեցուն, կուռ ոճով և գրական արժանիքներով համեմուած գեղեցկութիւնը զինքը հանդիսացուցին նաև իբր առաջնակարգ հրատարակախօս մը։ Այդ շրջանին է որ իր ցիր ու ցան էջերը հաւաքելով հրատարակեց հատոր մը «Յայդալոյս» ընդհանուր տիպոգոսին ներքև՝ որուն յառաջարանը կը բացատրէ թէ՛ այդ անուան նշանակութիւնը և թէ՛ այն քաղաքական և հոգեկան վիճակը որուն մէջ արտադրուած են այդ գրական հատուածները, որոնց ամեն մէկը իրենց առանձին յատկութիւններով գահարներ են։

«Յայդալոյսը՝ կըսէ հեղինակը, խորհրդանշանն է այն շրջանին, ուր բռնադատիչ խաւարը կը ճնշէր թրքահայ մտքին և գրականութեանը վրայ։ Բանը ոչնչացած չէր, բայց կենսագուրկ ու կիսակենդան, հազիւ կը ճառագայթէր մթաստուեր ու մտայլ հորիզոնի մը վրայ, որպէս տրամաթաթաւ անդրադարձ ցոլքը ցայգալուտային աշխարհի մը մէջ»։

Ռուբէն Զարգարեան իր նիւթը կառնէ գլխաւորաբար երկրէն ու իր տաղանդին աստուածատուր հմայքով մեզ կը բանայ իր բնաշխարհի ցաւերուն, հոգերուն և յոյսերուն լայնածաւալ աշխարհը. անիկա, թէև իրապաշտ գրողի ճշգրտութեամբ մեզ կը ներկայացնէ մարդիկ, իրերը և միջավայրը, բայց այդ պատկերացումները առարկայական ցըրտութիւն չունին. հեղինակը կըզգայ հոգին մարդոց և բնութեան և զանոնք քաղցրօրէն հազորդակցութեան մէջ կը դնէ մեզի հետ։ Այն անշօշափելի և անսահմանելի բանը, որը բանաձևելու անկարող է մարդկային լեզուն և որը միայն մեր զգացումներովը կըմբռնենք, նոյն իսկ յաճախ անդիտակցօրէն, կարտածորի սքանչելիօրէն Զարգարեանի ներկայացուցած տիպարներէն և անոնք կենդանի մարդոց ու ժգնութեամբը և բոլոր զօրութիւններովը կը վերադասնան մեր յիշողութեան։ Օրինակ «Տան սէրը» վիպակին Կով Առաքելն և «Սև հաւը կանչեց»ին խօճապաշի նիկօն, իր շնական

մուլութիւններով և զզջումի գիւային զաւարումներով, նու-
նիկը իր գրեթէ անասնային անգիտակցութեամբ ու այսօր-
ջնոյն կեսուրը, հայ պատու կնոջ ախարը, պատուախնդիր և
եղերակածորէն մուկոանդ իր պատուախնդրութեան մէջ, իր
չարչարանքներով, իր ամօթով ու արհաւիրքներով անմո-
ռանալի և համադրական տիպարներ են, որոնք կապրին ու
կը տանապին և որոնց ցաւերը, հոգիքը ու ամօթը մեր հո-
գիները կը դրդեն ցաւագինորէն:

Այդ իսկ պատճառաւ է թերևս որ Զարդարեանի իւրա-
քանչիւր վիպակը իր շրջանակէն զուրս կը տարածուի և
խորհրդանշական հանդամանք մը կը ստանայ: Անիկա որոշ
պատմութիւն մը ըլլալէ աւելի, այդ պատմութեան միջոցաւ
հոգեկան բացայայտ վիճակի մը խորհրդանշանն է և ինչ-
պէս իսկական կեանքը, անիկա իր բազմակողմանիութեամբ
կընդգրկէ բոլոր պարագաները ակնարկուած հոգեկան վի-
ճակին, որուն մէկ երասակն իսկ է արդէն և ոչ թէ օտար
պատկեր մը հակադրեալ օտար մտքի մը: Առնենք օրինակի հա-
մար «Տան Աէրը»: Կով Առաքել խոնարհ արարած մըն է,
խեղճուկ և ապաշտոն, որուն բոլոր ինչքը խարխուլ տնակ
մըն է: Այդ մարդը որ իր թշուառութեան մէջ խեղդուած
կորսնցուցած է յուզուելու, զգալու ընդունակութիւնները,
մէկ և մեծ հրայք մը ունի սակայն. ատիկա իր տանը սէրն
է: Մեղճուկ է նաև այդ տունը, կիսաւեր և խարխուլ բայց իր
սունն և ու այդ ծիծաղելի և տարապայաման սէրը, նշաւակ
ու ծաղր ու ծանակի աւարկոյ, հետզհետէ կը ստանայ սըր-
տառուչ ու գրեթէ եղերական բնոյթ մը: Կը խնդանք ու
կարտասուենք միանգամայն եթէ խորատուզուենք այն ըզ-
գայնութիւններուն մէջ, որ այդ վիպակը կարթնցնէ մեր մէջ
որովհետև վերջապէս ամէն մէկս մեր հոգիին խորքին մէջ կը
կըրենք այդ սրտառուչ և եղերական հրայքը մեր աւեր աւե-
րակ, մեր կիսակործան և խարխուլ տնակին համար որ մեր
հայրենիքն է: Աւ Կով Առաքելին միամիտ մտահոգութիւն-
ները, նախանձախնդրութիւնը պահպանելու ու զայն իր վերջ-
նական քայքայումէն փրկելու համար տնակը, որ աւելի քա-
րեկեցիկ ու փարթամ դրացիներուն ծագրանքը կը շարժէ
ու անոնց ստան անտարբերութեան կը հանդիպի, պատկերը

չէ արդեօք այդ մամուլներուն, հոգերուն և նախանձա-
թնդութիւններուն, որոնք մեր ամբողջ կորովը կը սպառեն,
որոնց համար կապրինք ու կը մեռնինք և որոնք աւելի փար-
թամ մեր դրացիներուն եթէ ոչ չկամութեան, զոնէ սառնա-
յին անտարբերութեան կը բաղխին:

Ներքին կոիւնները ու անհամաձայնութիւններն ալ պա-
կաս չեն կով Առաքելին Տան մէջ, հետեանք թշուառութեան
և անկէ բղխող ջղադրգիւ կեանքի, բայց հաշտութիւնը չու-
շանար, կրկին յանգելու համար կազ ու կուռի, որու միջո-
ցին դրացի չարածնի տղաքը քար կամ հող կը նետեն դրան
ու պատուհաններու ճեղքերէն կով Առաքելի հասցէին: Հարկ
կա՞յ բաղդատութիւնը շարունակելու: Անոզորմ ու անհա-
ւասար պայքար ձիւնին ու բութին դէմ որ կը ծածկէ տա-
նիքը ու կսպաննայ քնասել տունին պատերուն և նոյն իսկ
հիմունքին, պայքար դրացիներու անբարեացակամութեան
դէմ, ներքին կոիւններ ու օր մըն ալ տունը կամայանայ.
մենակ ինքը կը մնայ. ոգին այդ խարխուլ տունին, զոր հե-
ռաւոր ժառանգորդներ կը հեռացնեն, կը տարագրեն իր
բոյնէն: Տունը կանցնի օտարներու ձեռք ու կով Առաքել կը
մեռնի օտարի տուն. յուզարկաւորութեան միջոցին երբ դա-
զազը կանցնէր փողոցին անկիւնէն

— Հէ՛յ կիտի ոզորմած հոգի, կըսէին թաղին կնիկները պա-
տուհաններէն և կտուրներէն, հեղ մը զլուխդ վերցուր ու
դէպ ի տունդ հայիր...

«Գամփոը» սքանչելի հատւածը նոյնպէս խորհրդանը-
շական էջ մըն է. մեծահողի և ազնուազգի անհասականու-
թիւններու հանդիպած յաւիտենական հալածանքը կը ներկա-
յացնէ անիկա միջակութիւններու, սինլոր և քծնող քոթո-
թերու կողմէ: Վիրաւոր գամփոը լեռներէն իջնելով, գայ-
լերու դէմ իր ցեղին դարաւոր պայքարներէն վերջապէս
քնասուած, կը մոլորի ու կը մտնայ քաղաքին մէջ. ու ահա
վայնասունը փողոցի շուներու վահակներուն, որոնք իրենց
բնոյթէն ու կոչումէն ապաստեալ սորված են կտոր մը ոս-
կորի համար պոչերնին խաղցնել ու քծնել անպատկառօ-
րէն, որոնք կը հալածեն յողթանդամ ու փառաւոր գամ-
փոը: Անիկա անտարբեր ու զզւած կանցնի այդ ապաստ-

բաժնեբու մէջէն ու արտում բայց անյողողող կը վերագառնայ դէպի ամայութիւնը իր լեռներուն, ուր գոնէ իր պանծալի անցեալին յիշատակները կը թեաճեն և ուր հանդիսա կերպով կրնայ փակել իր աչքերը վերջնական խաւարին համար:

Զարդարեան գիտակցելով է, որ իր մտքերը խորհրդաւորաձէ սրտէ պատկերներու մէջ թէ միտքերը ինքնին քղտած են իր ներշնչումէն, հաս տեղը չէ քննել այդ կէտը. սա միայն կրնանք պնդել թէ Համիզեան ընթրիք բնութեաններուն ներքև, այն ուժեղ տաղանդը որ կը ներկայացնէ Ռուբէն Զարդարեան, չէր կարող խեղդել լացարձակապէս և միտքը ու հոգին անբռնարարիլի ու ազատ, իրենց արտայայտութեան եղանակները միայն կը պատշաճեցնեն այն ժամանակի արդիւիչ օրէնքներուն, այնքան որ այսօր կրկին կարգալով այդ գեղեցիկ էջերը ոնէ կերպով չենք զգար չարարաստիկ ազդեցութիւնը թրքական գրաքննութեան:

Ռուբէն Զարդարեան իր վիպակներուն և հէքեաթններուն մէջ պերճօրէն բանաստեղծական ոճ մը ունի. անոնք կարելի է ըսել թէ արձակ բանաստեղծութիւններ են, ուր ժամաւանդ բնութիւնը կը յայտնուի իր ամենէն մայրական ու ամենէն քաղցր զեղեցկութիւններովը: Բայց իր քնարերգական արձակը իր շքեղութեան լրումը կստանայ իր հէքեաթններուն մէջ, որոնք ամբողջական ստեղծագործութիւններ են և որոնց մէջ երբէք իր հաւասարը չունեցաւ:

Առաջին տարիներու աւանդավէպերու ներշնչման ազբիւրը եղած է հայրենի երկիրը, ու անոնք կերպով մը գերազոյն ծաղիկներն են հայ ժողովուրդի հաւաքական հանճարին:

Բայց Զարդարեանի տաղանդը հետզհետէ յեղաշրջուելով սկսաւ սաւառնիլ աւելի լայն հորիզոնների վրայ ու «Եօթը երգիլները», բայց մանաւանդ «Ով որ Սուլթան մը ունի իր հոգիին մէջ» վերտառութեամբ հէքեաթը, մեծ և հնամենի արեւելի, որրանը կրօններու և իմաստութեանց, հանդարտ, մեծավայելուչ, շողշողուն և արեգնաւէտ ոգին է որ կարտայայտէ Զարդարեան հիանալի orientaliste մըն է, ճշմարիտ Orientaliste մը:

Ռուբէն Զարդարեան զժրողդարար շատ ժամանակ չէ ունեցած իր գրական տաղանդը յաճախ արտայայտելու: Համեմատաբար այն երկար ժամանակին որու ընթացքին զբրած է Զարդարեան, հազիւ հատոր մը կուեննանք, ուր ամփոփուած են իր հատուածները. իսկ այդ հատորէն դուրս հազիւ թէ քանի մը գրական էջեր: Կեանքի զժուարին պայմանները, քաղաքական թէ տնտեսական, զինքը հարկադրած են ժամանակ կորսնցնելու զանազան կերպերով: Թէև ըստ ինքեան քանակը որ և է նշանակութիւն չունի, բայց զիտնալով թէ ատիկա ոչ թէ արդիւնքը եղած է զժուարին արտադրութեան այլ միայն տննպատտ պայմաններու, ցաւով կը նշանակենք ասիկա:

Հայ մտաւորականներու ձերբակալման միջոցին առաջին ձերբակալուածներէն մէկը եղաւ Զարդարեան. զինքը աքսորեցին Այաշ, ուրկէ եօթը աքսորի ընկերներու հետ զրկեցին դէպի Տիրքանակերա: Այաշէն մեկնելէն իվեր ինչպէս իր ընկերներուն, նոյնպէս իր մասին ոնէ ճիշդ լուր չէ ստացւած: Յոյս ունիմ որ քաղղը այնքան անողոք կերպով խիստ չպիտի ըլլայ մեր դէմ և թէ այդ սոսկալի և անարդար հալածանքներէն ետքը մեր այնքան թանկագին մտաւորականները պիտի վերադառնան մեզի:

Օսմանեան Սահմանադրութեան հռչակումը անակնկալ և խոտորնակի ելք մը կը հանդիսանար թրքահայոց անտանելի կացութեան: Յանկարծ ելլողի Մուրթը զինաթափ կըլլայ. բանտերուն դռները կը բացւին, երեկան դահիճները իրենց ապարաններէն բանտային խուցերը և աքսորավայրերը կը փոխադրին, մինչ ստոյգ և սոսկալի մահերու նախասահմանուածներ օրուան հերոսներ կը դառնան: Թուրքիա հայերու հանդէպ կը բռնուի արտակարգ սիրոյ տազնապէ մը և իր արտայայտութիւնները անով իսկ սրտառուչ կը դառնան մեզ համար, որ շատ բան ունէինք ներելիք իրենց: Թուրք և հայ եզրայրակցութիւնը կը նուիրագործուի հայ նահատակաց գերեզմաններուն վրայ, ուր թուրք մտաւորականութեան պատկանող դէմքեր արցունք կը թափեն մինչ դուժարտակներ կանցնին Կ. Պօլսոյ փողոցներու մէջէն Անդրանիկի մարշը նուագելով իբրև զինուորական քայլերդ

Շատեր մեզի մեղադրած են մեր դիւրահաւանութեան և մեր վստահութեան համար. ի հարկէ հոս տեղը չէ քննել թէ ինչն և ինչպէս հաւատացինք անվերապահօրէն մեր դարաւոր թշնամիներուն. ատիկա վստահ եմ թէ որոշ քաղաքականութեան մը արդիւնք ըլլալէ աւելի զգացումներու և երկուտեք անկեզ զդացումներու յորդում մը եղած է. շատ կարճատև եղած է այդ սիրային տազնապը երկու ցեղերու մէջ, բայց անիկա անհրաժեշտ էր թույլացնելու համար այն լարւած զրութիւնը, որով երկու ազգ դէմ դէմի կեցած էին տասնեակ տարիներէ ի վեր:

Քաղաքական ազատութիւնը իր հետ բերաւ նաև խօսքի և մամուլի ազատութիւնը. և ահա սարսափելի կաշկանդումներուն անմիջապէս յաջորդեցին խելայեղ և սանձարձակ օրեր: Խանդավառութիւնը ակեց շարաթներ և այդ յիմարական և անհաշիւ ուրախութեան միջոցին, որ մշտապես տօնի մը կերպարանքը կուտար մեր կեանքին զեզարուսեալ ու գրականութիւնը խրտչած ազմկալի և հրապարակային պոռոտախօսութիւններէ, ծածկուած էին բացարձակապէս: Թուրքիա անակնկալ վերադարձներու երկիրն է. ոչ մէկ վիճակ, մանաւանդ լաւ վիճակ չի կրնար կայուն ըլլալ. այդ յեղյեղուկ և անկայուն գետնին վրա դժուար է ամուր շէնք կառուցանել մանաւանդ որ ցնցումները արիւնոտ և աշխահասասան արհաւիրքներով տեղի կունենան. ազատութեան օրերը իրենց արժանի երգիչը դեռ չէին ունեցած. մեր արժէքաւոր զրոզները կամ շլմորած գահավիժող զէպրերուն կը լռէին և կամ ոմանք իրենք իսկ տարուած օրուան տրամադրութիւններէն իրենց ձայնը կը միացնէին ամբոխային աղաղակներուն: Դառն և դժնդակ սթափումը չուշացաւ սակայն: Ահա Մարտ 31-ի յեղաշրջական շարժումը. արիւնոտ ցոյցեր Կ. Պօլսոյ մէջ և Ատանայի կոտորածը, որ ամբողջ գրականութեան մը ծնունդ տուաւ, որովհետև մեզի համար այս սահմանադրական կոտորածները միակ առաւելութիւն մը ունէին Համիտեան կոտորածներուն վրայ. այն էր որ անձամբ կարողացանք այցելել աղէտավայրը և ոչ միայն օգնութեան հասնիլ արկածիալներուն, այլ նաև դրել մեր տաժանելի տպաւորութիւնները:

Սուլթան Համիտի գահընկեցութիւնը, աղատարար քանակին մուտքը Կ. Պօլիս և այն գաղջ, բայց հաշտարար քաղաքականութիւնը, որ օրուան կառավարութիւնը ունեցաւ, հայերու հանդէպ, թէև մոռցնել չէին կրնար տալ մեր վիշտը բայց մասամբ ամոքեցին մեզ:

Ասկէ դատ գէշ թէ լաւ համեմատարար աւելի կայուն վիճակ մը յառաջ եկաւ, որու միջոցին սթափած մեր առաջի օրերու խանդավառութիւններէն մեծ թափով, մեծ եռանդով, գրեթէ ածապարանքով սկսանք աղգային վերածնունդի գործին: Եթէ անկողմնակալ ոգիով քննենք այն ինչ որ իրականացաւ 5-6 տարիներու ընթացքին թրքահայ կեանքին մէջ, առանց վարանելու կարելի է հրաշք մը նկատել: Հոս մեր նիւթէն գուրս ըլլալով չինք կարող խօսիլ այն մեծ թէ փոքր ընկերութիւններու վրայ, որոնք հանրային գործը իրենց սերուն վրայ կը կրէին, գաւառներու և մայրաքաղաքին մէջ նոր բացուած հայ դպրոցներուն, եռանդուն և ազգանուէր աշակերտութեան, օրաթերթերու և պարբերականներու խանդավառ և հսկայ գործունէութեան, օտար գրականութենէ եղած թարգմանութիւններու, որոնցմէ երկուքը միայն յիշելով կրնամ զազափար մը տալ այն համայնական և անհատական հզօր գործունէութեան մասին, որ այնքան եղբրականօրէն պիտի վերջանար: Որինակ թիւտի Ֆրանսական յեղափոխութեան բազմահատոր գործը և Լինչի Արմենիան որոնց թարգմանիչը Լևոն Լարենց Արմենիա հոյակապ գործը ոչ միայն թարգմանեց անգլիերէնէ, այլ նաև իր սեպհական նիւթական միջոցներով, հազար զօտարութիւններու տոկալէ ետքը հազիւ թէ վերջացուց հրատարակութիւնը, երբ գրեթէ անմիջապէս ձերբակալուեցաւ և արտորուեցաւ: Այսչ և որուն սահմանուած վիճակը նոյնպէս անորոշ կը մընայ:

Վերածնունդի այդ ազգային թափին մէջ, գեղեցիկ գրականութիւնը չէր կարող իր արժանաւոր դերը չի կատարել և ահա հին գրողները ոչ միայն վերերկացին իրենց լաւագոյն արտադրութիւններով, այլ նաև նոր գրական ու բանաստեղծական դէմքեր իրենց թարմ շունչովը և ինքնատիպ ու հզօր շեշտով հարստացուցին թրքահայ գրականու-

Թիւնը: Ասկն մէկ նոր գրողներէն յիշատակելի գծուաբ պիտի ըլլար, այնպէս որ ստիպուած ենք անուանել անոնք միայն որոնք նոր ակօս մը բացին մեր գրականութեան մէջ: Միւսաք Մեծարենց իր խորհրդապաշտական գեղեցկութիւններով իր բնութենապաշտ հակումներով այնքան բազցը և խոստմնալից, գծադղաբար շուտով մարեցաւ իր կանխահաս մահուան պատճառով: Կին գրողներու շարքին յայտնուեցաւ օրիորդ Մաննիկ Պէրպէրեան, որ իր ճշմարիտ բանաստեղծութիւններէն իր պայծառ անկեղծութիւնով և իր արձակ բանաստեղծութիւններու անսթիկեթի և ներդաշնակ թոփշրով այնքան գեղեցիկ և ինքնատիպ էջ մը բացաւ: Կոնստան Զարեան Եւրոպական նորագոյն գրականութեամբ սնած, իր արուեստագէտի խառնուածքով ընդլայնեց հորիզոնները մեր գրական տեսողութեան և կոչուած էր իր առանձին գերը կատարել մեր մէջ ու վերջապէս Դանիէլ Վարուժան, որ ամենէն զօրեղ ներկալացուցիչն է նոր գրողներու և որ հակառակ իր երիտասարդ հասակին յայտնուեցաւ իբր վարպետ մը հայ լիզուի և բանաստեղծական արուեստի հարուստ՝ իր ներշնչման հարտդատ և բազմակողմանի աղբիւրներով, իր սրացումներով և կենսունակութեան իր յորդազեղ պերճանքով: Դանիէլ Վարուժան ծնած է 1884-ին Սեբաստիայի մէջ, իր ուսմունքը առած է Վենետիկի Միսիթարեաններուն մօտ և յետոյ Ալեքիքայի Կոնստանդաքին մէջ: Աստիճանագրութեան հոշակումէն ետքը Վերազարձաւ: Մերաստիա իսկ վերջին երկու տարիները կը գտնուէր Կ. Պօլիս բոլորովին նուիրւած իր գրական արդասուոր գործունէութեան:

Դանիէլ Վարուժանը արդիւնք է զանազան ազդեցութիւններու, որոնց ամեն մէկը իր խոր դրոշմը դրած է իր մեծ տաղանդին վրայ և որոնք իրարու հետ ձուլուելով յառաջ բերած են այն զարմանալի և հրաշալի բանաստեղծական խառնուածքը, որը ոչ միայն արտայայտիչը կը հանդիսանայ իր ճոխ և բազմալար հոգիին այլ նաև ու մտնաւանդ իր ժամանակի ազգային ոգիին: Դանիէլ Վարուժանի մէջ կայ իր բնաշխարհի զալարագեղ զաշտերուն բերրի ու գիտատ ճոխութիւնը, բնութեան մայրական և ար-

գասաւոր զեղեցկութիւնը, վննեաբիկեան նրբագեղ և փարթամ գունազեղութիւնը, հեթանոսական գեղեցկութեանց, ձևի ու գոյնի զեղիս ու տափական հրայրքը, ուրախութիւնը հաճոյքին, հրճուանքը ստեղծագործական ուժին, պաշտամունքը հզօրին և գեղեցկութեան, պանծացումը Հսովմէական անյաղթելի և գեղեցկապաշտ ոգիին ու նաև ցաւը իր շարչարւած ազգին, ցաւը ու մորմոքը աառապող դասակարգերուն բայց մանաւանդ ու զլիաւորապէս հրայրքը վերածնունդին, նոր և հսկայական վերածնունդի մը, գեղով և ուժով առլի:

Դանիէլ Վարուժանի բազմակողմանի տաղանդը դերագոյն արտայայտութիւնն է իր ժամանակի ազգային ոգիին ինչպէս Սիամանթօն արամաբանական հետեանքն էր այն ժամանակի ազգային եղբերեղութեան:

Իբր հարազատ հայ, զաւակը դասական ցեղի մը որ գերադանցապէս տողորւած է բնութեան հեթանոսական պաշտամունքով, Դանիէլ Վարուժանի հոգին հեշտութեամբ և բնական ուղիով մը հաղորդակցութեան մէջ մտած է Յունական և Հռովմէական հեթանոսական գեղեցկութիւններուն հետ: Անիկա իր բնական և ցեղային հակումները կազդուրած է օտար ներշնչման աղբիւրներէն և ահա յայտնաբերած է մեր գրականութեան մէջ ոգին մեր արի և զուարթ նախահայրերուն: Քրիստոնէական միստիքականութիւնը չէ ցամքեցուցած երբէք բոլորովին մեր կենսութիւն և լիարուն առատութեանց շքեղ զուարթութիւնը, արեգնաւէտ հորիզոններու առթած պայծառ և լուսաւոր պերճութիւնը և ոչ ալ բնութեան ստեղծագործող և աստուածային ուժին սեղեցկութեան զգացումը: Քաւութեան և աղաշխարանքի ձորձերուն ներքև, պերճագեղ պատմուճանները հեթանոսական ճոխութեանց երբէք չեն մերկացուցած մեր ազգային ոգին, ինչպէս տառապանքի քրիստոնէական հեշտանքը չէ յաղթահարած ապրիլու և ստեղծագործիչու աստուածային ուրախութեան: Հայը դարերու բնթացքին հակառակ իր տիրամած և միստիք երևոյթին մնացած է ներքնապէս հեթանոսական, բառին աղնուագոյն առումով՝ Օտար դժբաղտութիւններ, երկար և դժնդակ եղերականու-

Թիւնը իր պատմութեան ժամանակաւոր կերպով մտաւցնել տուած են իր ճշմարիտ հակումները, բայց ամեն անգամ երբ նոյն իսկ կարճատև շրջաններով լացն ու ողբը դադրեց են պահ մը, ազգային ճշմարիտ ոգին յայտնուել է դանազան կերպերով: Ու մեր եկեղեցին իսկ զերծ չէ մնացեալ այդ հեթանոսական շունչէն, ուր գեղեցկագոյն աղօթքները ուղղըւած են արեգակին և Քրիստոսի խաչելութեան առաջ փառարանուած լոյսը իմանալի:

Ազգային այս թանկագին յատկութիւնը, ցան ու ցրիւ և խեղդուած յաճախ դժբաղդութիւններէ և օտար ազդեցութիւններէ, իր լրումին մէջ պէտք էր արտայայտուէր վերջապէս և այդ խօսքը կը պատկանի Դանիէլ Վարուժանի տաղանդին:

Իր բանաստեղծի ասպարէզին մէջ Վարուժանի տաղանդին յեղարշըջուամբ յստակ կերպով կը տեսնենք աչքի առաջ ունենալով իր երկերը. Դեռ Վենետիկ եղած ժամանակ գրած է «Յեղին Սիրտը», ուր ինչպէս ամեն հայ գրող տպաւորուած ազգային դժբաղդութիւններէն կերգէ ցաւը ու հեծեծանքը մեր ազգին: Դանիէլ գեղեցիկ էջեր ունի այս հատորին մէջ, բայց յայտնի է որոշապէս որ իր սեպհական ուղին չէ դտած տակաւին. «Սարսուռներ» հատորիկը ի յայտ կը բերէ աւելի անձնական արժանիքներ, բայց վարանումները և տատանումները զգալի են տակաւին. Վարուժան իր տաղանդին լրումին մէջ կերևայ «Հեթանոս երգեր» ստուար հատորին մէջ, ուր վերջնականապէս կը ձևաւորուի իր բանաստեղծական կերպարանքը:

Իր հատորին վերջը բացադրելու համար իր գիրքը, տհաթէ ինչ գեղեցիկ սողեր կը գրէ.

Ո՞վ բարեկամ, խորհէ թէ Երզն է պատմեց

Ցաւն հաճոյքին և հաճոյքները ցաւին,

Սիրտն ըսկի՛ մ'է՛ ուր երբ լեցուին գինիներ

Աստուածներու սուրբ արիւնին կը փոխուին.

և վերջապէս

Ան լոկ կրնայ ճանչնալ Երազը սրարբաց՝

Ո՞վ կ'արբենայ կեանքի գիրտոջն ու խուսկով,

Ան որ Մարդն է՝ լոյսով ցեխով թըրծուած,

Ան որ Մարդն է սրբագործուած արցունքով:

Ուրիշ ուղղութեամբ մը, անկախաբար և միաժամա-
մանակ Շանթ-ի շէին Աստուածները զրաման կը հաստա-
տէ դէպի մեր նախահայրերու ուժի և սիրոյ հեթանոսական
գեղեցկութեանց վերադարձը: Այս վերադարձը միակողմանի
և նախադատաբար միտքով նկարագրողները միայն կրնայ
գայթակղեցնել: Գեղեցկագիտական որոշ հասունութեան հա-
սած հատարակութիւնը, իր խաղաղ դատողութեամբ ուրիշ
բան չի կարող տեսնել բայց միայն հզօր վերածնունդ մը,
նոր և ուսման թարուսակ մը որ յանկարծ կը ծլի ու կը
բարձրանայ հնամենի ազգային բունին քովէն: Եւ այնքան
Շանթը, որքան Գանիէլ Վարուժան, տարբեր գրական սեռե-
րու մէջ, տաղանդաւոր արտայայտիչները դառնալով ազգա-
յին հանճարին, կոչուած էին նոր ջահակիրները դառնալ, ո-
րոնք շատոնց ի վեր մոռցուած բայց արդէն իսկ սեպհական
գեղեցկութեան նոր հորիզոններ պիտի լուսաւորէին:

Այս վերածնունդը ձեւական և գրական նորութեան մը
տրժէքը չէր ներկայացնէր միայն: Թըքահայ գրականու-
թիւնը և ժողովուրդը նոր ուղղութեան մը սեմին վրայ կը
գտնուէին:

Հայկական դասական արուեստի և հայրենի երկրին
գեղեցկութիւնները, ներշնչման նոր և հարազատ ազդիւր-
ները պիտի դառնային: Բուն հայ ժողովուրդին մերձենալու
և անոր հետ ձուլուելու ձգտումը հզօր փափաքներով կար-
տայայտուէր արդէն: Պոլսական գրականութիւնը արժատա-
զօրկ և գաղութային, չէր կարող այլ ևս ասպարէզը դառ-
նալ թրքահայ գրագէտներուն, որոնք տարիներու ընթաց-
քին գտած էին իրենց բուն կոչումը և գիտակցութիւնը և
կուզէին տեղափոխուիլ և խմբուիլ հայրենի երկրին մէջ:
Այդ նպատակներով է որ կազմուեցաւ «Հայաստանի ու-
սումնասիրութեան» ընկերութիւնը, որուն շուրջը անմիջա-
պէս բոլորուեցան գրեթէ բոլոր արժէքաւոր գրողները: Ըն-
կերութեան առջին նպատակներէն մէկն էր ճամբորդել
դէպի Հայաստան, ծանօթանալ անձամբ երկրին և ժողո-
վուրդին և գրագէտներու կարաւանները մեծ հոանդով կը
կազմուէին արդէն: Առաջին մեկնողը եղաւ Տիգրան Զէկիւր-

եան «կասան» գեղեցիկ հանդէսին խմբադիրներէն մէկը, ժրաջան և եռանդուն զբող մը, որ նոյնպէս այսօր աքսոր-
ւած է: — Աւրեմն ինչ նոր շունչ որ Շանթ և Դանիէլ Վա-
րուժան դրած էին իրենց գրականութեան մէջ, գերազանցօ-
րէն հետեանքն է հաւաքական ձգտումին և անոնք յստա-
կօրէն ցոյց կուտան մեզ նոր մեկնակէտերը:

Դանիէլ Վարուժանի ամենամեծ արժանիքներէն մէկն
է իր լեզուն. ոմանք անհասկնալի կը համարին զայն.
մենք թրքահայերս ունէ դժուարութիւն չենք կրեր հասկնա-
լու համար Վարուժանը. իր մտքին զիւրաթիք ճկունութիւ-
նը, իր տեսլականին շքեղ ճոխութիւնը, իր պատկերներուն
գեղուն գեղեցկութիւնը արտայայտելու համար բնականօրէն
պիտի ունենար անիկա ճոխ բառամթերք մը. իր ձևը, իր
ոճը արդիւնքն է իր մտքերու բարդ պերճանքին և անիկա
ոչ մէկ օտար և այսպէս ըսելով միջազգային բառ չի գոր-
ծածեր. անիկա կերթայ քաղելու իր գոհարները ազգային
ճոխ գանձարանէն, մեր դրարարէն, որուն հնամենի և հա-
րուստ բառերը, հարադատ իրենց ծագումով և հնչականու-
թեամբ, լոյս աշխարհ կը վերադառնան: Անոնք որ շատ զօ-
րաւոր չեն հայերէն լեզուի մէջ, անոնք միայն դժուարութիւն
կրնան կրել. Մնաց որ ամէն տեղ և ամեն ժամանակ բարձր
բանաստեղծութիւնը կրնայ զիւրահաղորդ չըլլալ և այն
ջանքը, որ պէտք է ընել կարգ մը հեղինակներ հասկնալու
համար, քարերար և դաստիարակիչ ջանք մըն է:

Անկարելի է այսքան սուղ ժամանակի մէջ ամբողջա-
կան գաղափար մը տալ Վարուժանի շքեղ և բազմակողմա-
նի տաղանդին վրայ: Ես բաւականացայ նշանակելով միայն
իւր ներշնչման աղբիւրները և իր ընդհանուր ձգտումները:
Վերջին հայկական հալածանքներու միջոցին երբ թուրք կա-
ռավարութիւնը կը հետամտէր այսպէս ըսելով, քաղել
ծաղիկը մեր մտաւորականութեան, ձերբակալեց նաև Դա-
նիէլ Վարուժանը, որ ոչ մէկ եղանակով քաղաքական դոր-
ծունէութիւն չէունեցած: Զինքը աքսորեցին Չանզըբը և
օդոստոս ամսուան մէջ փոխադրեցին Այաշ, ուր կը գտնուէ-
ին ծանր ամբաստանութեանց ներքև եղողները: Անկէջ ի
վեր ոչ մէկ լուր չի կարողացանք ստանալ բացի չարագու-

շակ շշուկներէ: Դանիէլ Վարուժանի մասին այ կրնանք բ-
սել, որ մեր յոյսը դրած ենք միմիայն այն բանին վրայ որ
իր սպաննութեան լուրը չէ հաստատուած:

Ես ջանացի այս երեկոյ հակիրճ գաղափար մը տալ
այն գրական յեղաշրջման մասին որ կատարուած է 1892
թուականներէն մինչև մեր օրերը: Մահմանադրութեան հըռ-
շակումէն ետքը միայն ազգային վերածնունդը բայց մա-
նաւանդ թրքահայ գրականութիւնը նոր թափ մը ստացաւ
և ինչպէս տեսաք, անիկա իր փայլուն սկզբնաւորութեանց
մէջ էր միայն, երբ հարուածը իջաւ մեր վրայ աւելի սաստիկ
քան որ երբէ տեսն: Ամբողջ հայ մտաւորականները, բա-
նաստեղծ, գրագէտ, խմբագիր, ուսուցիչ, ենթարկուեցան
անարկու մարտիրոսութեան մը. բիրտ ուժը եկաւ կանգ-
նեցաւ մաքի և տաղանդի ուժին դէմ. ինչ որ թշնամին չէր
ներեր մեզի, և անողոք հալածանքի մը կենթարկէր մեր
ազգային բարձրագոյն ընդունակութիւններն էին, որոնց դէմ
համարժէք ուժով պայքարելու բոլորովին ապիկար կզգար
ինքզինքը: Ատեկութիւնը հայերու հանդէպ անկարողու-
թեան կատաղութիւն մըն է և միանգամայն դարաւոր և
անհաշտելիութիւնը երկու զանգուածներու, որոնցմէ մէկուն
ստեղծագործող հանճարը և միւսին քանդիչ ու ոճրագործ
հանճարը դէմ դէմի կր կանդնին յարատեօրէն. և որոշ ժա-
մանակ զսպուած, պարբերաբար կը յայտնուին հեղուհեղ
աւելի անողոք կերպով մը անհաւասար պայքարներով և
արիւնի բաղանիքներով:

Մեր թրքահայ մտաւորականները, գրեթէ առանց բա-
ցառութեան, ամենէն փայլուն ներկայացուցիչներէն սկսե-
ով մինչև ամենէն խոնարհները՝ մեծ հոյեկան արիութիւ-
նով դիմադրաւեցին թշնամիին հալածանքներուն: Այն
անօրինակ երեոյթը; այն հողեկան մեծութիւնը, արժանա-
ւոր պաղարիւնութիւնը, և անսասան արիութիւնը անար-
ժան թշնամիին հանդէպ, որ պարզուեցաւ յաճախ իմ աչքե-
րուս առաջ, այդ անմոռանալի երեոյթը մեր ազգային փառ-
քերէն մէկը պիտի կազմէ: Ես տեսայ մարդիկ որ ստոյգ և
քստմեկլի մահւան մը կը դիմէին ժպտադէմ ու անշիջանիկ
յոյսի նրայքը աչքերու մէջ. ևս տեսայ մարդիկ, որ կրնային

ժամանակին խուսափիլ և գիտնալով թէ ինչ կ'սպանայ իրենց, մնացին աւարակու համար իրենց գրական գործը: Այդ պայմաններուն մէջ լրացաւ Լինչի Արմենիայի թարգմանութեան հոյակապ գործը: Եւ տեսայ մարդիկ, որ մերժեցին փախուստ տալ երբ դեռ հնարաւոր էր, ժողովուրդը անտէր չի ձգելու համար իր ճշնածամային օրերու մէջ և վերջապէս մարդիկ, որ տեսակ մը ցաւազին հեշտանքով կը գոհարեբէին իրենց անձերը այն հաստատ համոզումով, որ իրենց ազնիւ արիւնով պիտի բացուէր նոր օրերու արշալոյսը: Ու ամենքն ալ, հաստատ ու ամբաքայլ, բռնեցին արտորայայրի ճամբաները, ենթարկուեցան բիրտ ու վայրագ թշնամիին նախատինքներուն ու հայհոյանքներուն, պայծառ հողիով, լուսաւոր մտքով, որովհետեւ ամենքն ալ, ու ամենքս ալ գիտէինք, որ հոգին ու միտքը անբռնաբարելի կը մնան, թէ անոնք չեն կրնար ենթարկուիլ թշնամիին չար դիտաւորութիւններուն, որովհետեւ և յայտնատեսութիւնը ունեցանք որ մենք կը քալենք մեր արի, ազնիւ ու վեհանձն նախահայրերուն զձած ճամբէն, թէ մեր վրայ ինկած զաժան պարտաւորութիւնը պատուով կը տանինք և թէ վերջապէս այդ անողոր կուին մէջ մենք ձերբակալուած, արտորական թէ փախստական, մենք ենք ճշմարիտ յաղթականները:

Կ. ռ. 504 (804)

II
31002

Հայ Գրողների Կոմիտեի Բնկերության հրատարակած
քիւնները

- 1. Սայեաթ-Նովայ 5 կ.
 - 2. Քիւրբանայ ժամանակակից գրողներ
 2. Ասայեանի 30 կ.
-

